



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայրեր Առթուելի Ե-ի
Կենտրոնացման Կարճագիր

Ըստ Ա. Բ. Գ.

1877.

ԱԵՐԵՐ

429, 533, 536



Սերեբ
536

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Ժողովեց

ԱՂԷՔՍԱՆԳՐ ԵՐԻՑԵԱՆՑ



ՏԻՓԼԻՍԻ

Типографія Амбарцума Эпифаніанца и К-го.

1877

ՀԱՄԱՐԱՐՈՒՄ ԱՅՈՒՆ

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Գրքեր

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Дозволено цензурою. Тифлисъ. 23 сентября 1877 г.

(4289)
41



18428

536-2009

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Ա.

ԷԶՄԻԱԾՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Դաւիթ և Գանիէլ կաթողիկոսների կառուցած մօտ վեց տարի տեւելով՝ ազդիս ընդհանրապէս, և Աթոռին զխաւորապէս, մեծամեծ փնասներ պատճառեց: Սկսած 1801 թուից մինչև 1807. թուի վերջերը Արարատ գաւառը աւերակ դառնալու էր վիճակուած, պարսից և ռուսաց զօրքերը արիւնով ողողում էին Մասիսի և Արագածի շրջակայ դաշտերը, ապագայ երջանկութեան վրայ յոյս դրած՝ երևանցիք հարիւրաւոր և հազարաւոր գերդաստաններով փախչում էին դէպի ռուսաց սահմանը, բայց նպատակներին չը հասնելով անցնում էին Ղարսայ կողմերը: Կաղթողները գաղթած տեղերին՝ օտարութեան մէջ էին կոտորվում և ջնջվում, չգաղթողները՝ հայրենի հողին հաւատարիմ մնացած հայերը՝ իւրեանց երկրի մէջ պարսիկների, քրդերի ասպատակութեան զոհ էին լինում և լռիկ մնջիկ աւանդում էին իւրեանց ոչոքին պիտանի չը համարուած կեանքն ու հողին: Նրկիրը մնացել էր ամայի, աւերակ: Էջմիածինը, որին իւր արտասուք սրբող համարած է թշուառ հայն, ինքը ամէնից շատ կարօտ էր թէ օգնութեան և թէ միտթարութեան: Թողնենք մի կողմը այն նեղութիւնները, որ կրեց Աթոռը պարսից և ռուսաց պատերազմի միջոցներին. բաւական է յիշել միմիայն Դաւթի ու Գանիէլի կռուի սարսփելի հեռեանքները, որոնց, իհարկէ, զխաւորապէս ենթակայ եղաւ Էջմիածինը իւր միաբանութեամբ:

Դաւիթը հաստատ ու յամառ կերպով աշխատում էր հայոց կաթողիկոս մնալ և վերջին աշխարհքից իւր հակառակորդ Կա-

նիէլին: Գաւիթը կարծում էր որ միաբանների վրայ գործ դրած բռնու-
նութիւնը և երկաթէ գաւաղանը բաւական պէտք է լինին նոցա
նուաճելու, իսկ Նրեանի կաշառակեր խանի և պարսից մեծամեծ-
ների համակրութիւնը և պաշտպանութիւնը ձեռք բերելու համար
Գաւիթը ստիպուած էր արծաթի և ոսկու հանքեր բանալու.....
այդ հանքերը պիտի գոյանային Եջմիածնի սկիհներէից, խաչերից և
գոհարեղէնից: Գաւիթը պարսից ձեռքին խաղալիք էր դարձել. սոքա
օրը մի անգամ փոխում էին իւրեանց տուած հրամանները, վկայա-
գրերը և նոյն իսկ բարեկամութիւնը և ամէն անգամ մեծամեծ կա-
շառներով վերահաստատում կամ նոր բարեկամութիւն ցոյց տալիս:
Պարսից այդ խորամանկ ընթացքը շատ թանկ էր նստում Գաւթին,
բայց սա կէս ճանապարհից դատարկաձեռն վերադառնալ չէր ու-
զում, իսկ հետևանքների ծանրութիւնը պառկում էր Աթոռի վրայ:
Այսպէս ահա աթոռային զանձարանը վաղուց արդէն դատարկուած
էր, նուիրակութեան արդիւնքները կամ Եջմիածնից դուրս էին ծախս
լինում և կամ ամենեւին չէին հասնում ոչ Գաւթի և ոչ Գա-
նիէլի ձեռքը: Եկեղեցական թանգազին սպասների և զարդերի մի
մասը արդէն աւար էր եղած Թիֆլիսում Ազայ Մահմէդ խանի ժա-
մանակ, մի մասը որպէս աւանդ պահուում էին Բայազետի հայերը, և վեր-
ջագէս մի մասն էլ Ժեներալ Նեովէտայիվի ձեռքումն էր, որ Գաւ-
թից ազատելու համար, ժողովեց ու աւանդ ցուցակի և հաշուի
տարաւ Թիֆլիս, վերջագէս Եջմիածնի մէջ Գաւթի ձեռքին մնա-
ցած մասը կամ վաճառուած էր և դրամը պարսիկներին կաշառ-
տուած, և կամ թանգազին ակները և գոհարները իսկութեամբ
ընծայ էին զնացել խաներին, նոցա կանանց ու արբանեակներին:
Աթոռային կալուածների արդիւնքը այն խառնաշփոթ ժամանակ-
ներում երկու կողմի զօրքերից յափշտակուած էր, կալուածները զի-
նուորներից ոսնակոխ էին եղած, հայ դիւղերը ամայի էին մնացած,
որովհետև բնակիչները ջարդուել, փախել գողթել էին: Միաբանու-
թեան մեծ մասը արտաքոյ Եջմիածնի օտար քաղաքներում թա-
փառւում էր դռնէ դուռը մուրալով, կամ թէ այս կամ այն վանքի
անկիւնում կուչ եկած ապրում էր. իսկ Աթոռի մէջ մնացածները,
եթէ Գանիէլեանք էին հոգուով — քաղցած, ծարաւ հալածուած էին,
իսկ եթէ Գաւթեանք՝ աշխատում էին զիշեր ու ցերեկ իւրեանց
ապօրինաւոր դահակալի բռնութիւնը հաստատել: Ոչ ոք չէր հսկում
օրինապահութեան վերայ, կարգ ու կանոն չկար, եկեղեցական բա-

րեկարգութիւնը վերացած էր մինչև անգամ սուրբ Իջման տեղից.
վանքերի և եկեղեցիների դռները գոցուել էին, պատարագը լւած էր:
Ամբողջ Արարատեան աշխարհի հայ բնակիչները ենթարկուել էին
մահի և գերութեան. ոմանք իւրեանց գերի զնացած հօր, մօր,
եղբօր և զաւակներին Բայազետի և Պարսայ մէջ էին պտուում, ոմանք
իւրեանց կնոջ և քոյրերին Թաւրիղի հարէմներին մատնուած էին
զանուում, և ոմանք իւրեանց փախած, անհետացած ազգականների
լուրը Վրաստանից էին առնում:

Եւ ահա այսպիսի դժբաղդ ժամանակում հայաճուած, երկա-
րատե բանտարկութիւնից խեղաթիւրած, զառամած, հիւանդ Գա-
նիէլին վիճակուեցաւ դալ, բազմել համադգային կաթողիկոսական
գահի վրայ: Էին, ծերունի, փորձուած եպիսկոպոսներից ոչ ոք
չկար որ կարողանար գալ նորա զառամութեան օրերը փո-
փել և օգնէր նորան կառավարութեան մէջ: Մինաս եպիսկոպոսը,
այն ամէնից պատկառելի ծերունի տեղապահը, որ դարուս սկզբում
Եջմիածնի պարծանքն էր համարվում, արդէն յաւիտենական քնով
ննջած էր: Գործունեայ Թադէոս եպիսկոպոսը, որ երեք կաթողիկոս-
ների ժօռ նամակագիր և կոնդակագիր էր եղած, չկարողանալով ան-
տարբերութեամբ նայել Գաւթի բռնած ընթացքին, կենսամաշ էր
եղած ու վախճանուած: Եփրեմ եպիսկոպոսը Ռուստատանում,
Գէորգ եպիսկոպոսը Ռումինայում, Յովհաննէս Գեղարդակիրը Վրաս-
տանում զբաղուած էին իւրեանց վիճակային գործերով: Գրիգոր
նախկին պատրիարքը (Վ. Պօլսի) Թիֆլիսում հիւանդ տրորվում էր
անկողնում, Զմիւռնայի նուիրակ Մարտիրոս եպիսկոպոսը ահից
Գաւթի կողմնակից էր դարձել և ձայն ծպտուն չէր հանում: Սի-
մէօն աթոռակալը, Բարսեղ եպիսկոպոսը և նոցա համանեմները
Գաւթի ահից քաշուել, առանձնացել էին մի մի վանք կամ
քաղաք և ոչ միայն հանդէս չէին դուրս գալիս, այլ և վախենում էին
վերադառնալ Եջմիածին:

Այսպիսի մի ամայացած քանդած Աթոռ ժառանգելու եկաւ
1807 թուին Գանիէլը և իւր աւաջին գործը եղաւ վանքի օրական
հացը և հասոյթը հօգալ: Ամենայն բարութեամբ լի համադգային
Աթոռը, որ ամէն օր հազարաւոր օտարականների կարող էր
հիւրասիրել, այժմ այն թշուառ վիճակի մէջ էր, որ նորա գահա-
կալը մայիսի 18ին (1807 թ.) Գեղարդակիրին դրած կոնդակով ա-
զերտում է Վրաստանի և Ղազախի վիճակիցն իւր, պանիր ուղար-

կել միաբանութիւնը կերակրելու համար, նմանապէս խնդրում է ժողովել և ուղարկել Եջմիածին որքան կարելի է գոմէշ, եզն, ձի ու ջորի, որպէս զի ինքն բարձրագլուխ երևայ: Բացի այդ թէ նոյն կոնդակի և թէ այդ միջոցում գրած քանի մի ուրիշ գրութիւնների խառնաշփոթ ոճից և գուեհիկ լեզուից երևում է, որ Գանիէլը նոր վերադարձած ժամանակ Աթոռը այն աստիճան թափուր էր, որ մինչև անգամ կաթողիկոսի համար կոնդակ գրող ևս չկար. այդ է պատճառը, որ Նազարեան աղայ Մինասի ապսպրած և հրահանգած կոնդակները կամ նամակները Ռուսաստանի պալատականների վրայ՝ տակաւին մնացած էին անկատար:

Այս ամենայն թերութիւնների լրացնելը վիճակուած էր Ներսէս Աշտարակցի՝ արեղային, որ քաջ տեղեակ լինելով Աթոռի դրութեանը, չկարողացաւ այլ ևս բացակայ մնալ ու սլացաւ հիւսիսից, եկաւ, հասաւ Եջմիածին 1808 թուի մարտի 19ին: Մինչև Ներսէսի ժամանիլը Գանիէլը ոչ մի երևելի անձի հետ ձեռնամուխ չէր եղած թղթակցութիւն անելու: Այժմ Ներսէսը, և միևնոյն միջոցներին վերադարձած Բարսեղ եպիսկոպոսը, որ սաստիկ Գանիէլեան էր և Ներսէսի համամիտ և անձնուէր բարեկամն, — երկուսը միասին ձեռք առան Աթոռի և ազգի կառավարութիւնը, իսկ Գանիէլը լոկ կաթողիկոսութեան անունն էր կրում:

Բ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԿԱՄ ՍԻՆՈԳՈՍ

Հայոց անիշխանութեան ժամանակները, մանաւանդ վերջին դարերում, Հայաստանեայց եկեղեցւոյ կառավարութիւնը վերին աստիճանի անկարգ ու անկանոն ընթացք էր բռնած: Կաթողիկոսը եպիսկոպոսների հետ, եպիսկոպոսները քահանայների հետ, իսկ սոքա ժողովրդականաց հետ — սմէնքն էլ վարվում էին աւելի նահապետական և հայրական իրաւունքով, քան թէ եկեղեցական օրինաց համեմատ: Կաթողիկոսը պատժում էր կամ պարգևում ըստ իւր քմաց և ճաշակին, առանց որ և է սահմանադրական օրէնսդրութեան, և այդ կամայք հոգևորականները միակերպ հնազանդում էին, որովհետև կաթողիկոսը իւրեանց Գլուխն ու Հոգևոր հայրն էր: Եպիսկոպոսները աշխարհական դործերում խառնուելով

գաւազանը ձեռքին այս կամ այն պարոնին ծեծ էին տալիս, վերջինները ծեծն ուտում էին, բայց դարձեալ եպիսկոպոսի ձեռքը պաշում ծառայեմ սրբազնութեանդ ասելով: Քահանայները վախում էին վեղարաւորներից, բայց ինքեանք շատ անգամ բռնանում էին ժողովրդականների վրայ: Գիւղի մէջ թէ դատաւորը, թէ ոստիկանը, թէ օրէնսգէտը, թէ փիլիսոփան և թէ աստղաբաշխը — քահանան էր: Սա եկեղեցապատկան հարկերի և հոգեբաժինների քանակութիւնը ինքնակամ որոշում էր և ժողովում, հարսնախօսութեան գնում գալիս, խնամութիւնները չհաս համարում, առևտրական գործերում վկայ լինում, կտակները հաստատում, կալուածների ծախսը վաւերացնում և այլն. Այս բոլորը ժողովուրդը հնազանդութեամբ տանում էր, ծառայեմ սուրբ կամքիդ տէրտէր ջան ասելով: Բայց չնայելով այդ նահապետական կեանքին, պատահում էր, որ քահանայն ժողովրդի կեղեքիչ և բռնակալ էր հանդիսանում, իրան տուած յարգ ու պատիւը չարաչար գործ դնում. ժողովուրդը տրտնջում էր և բողոք բարձրացնում մի վեղարաւորի առջ. վեղարաւորը երկու կողմից էլ գուցէ ընծաներ էր ստանում և ըստ քմաց վճռական դատաստան կտրում, բայց ոչ որ այդ ընծաներին կաշառքի անուն չէր տալիս. անբաւական կողմը գործի Աստուծոյ արդար դատաստանին էր թողում: Քահանան շատ անգամ ազահութեամբ էր վարվում ժողովրդի սուրբի հետ: Վարդապետը երբեմն ոչ պակաս ազահութեամբ առնում էր քահանայից ինչ որ միայն կարող էր առնել, որովհետև այդ դրամը իւրեան եպիսկոպոսական աստիճանին պիտի հասցնէր, եպիսկոպոսը հարստութիւն էր դիզում մի օր կաթողիկոսանալու մտքով, իսկ կաթողիկոսին դրամ էր հարկաւոր մահմէտականաց բռնութիւնից իրան ազատ պահելու համար: Եջմիածնի հայրապետի կողմից նուիրակներ էին շրջում աշխարհքիս չորս կողմը, տարիներով ժողովրդից սուրբ ժողովում, և կամ հարստութիւնից շլացած ամենեկին չէին վերադառնում Եջմիածին, կամ թէ մի չնչին բան հասցնելով Աթոռին, մնացածը անհաշիւ կլանում էին իրանք: Ոչ հաշուպահութիւն կար, ոչ հաշուատուութիւն: Եպիսկոպոսը կամ վարդապետը վախճանում էր և նրա դիպած հարստութիւնը յափշտակում էին նորա ազգականները, որոնք քաղցած գայլերի նման շրջում էին իւրեանց սրբազանի՝ ետեից: Հայ ազգը առատութեամբ սուրբ էր տալիս իւր հոգևորականութեանը, իսկ սուրբ Աթոռը

միշտ խեղճութեան մէջ էր և պարտքերի տակ խեղճվում մինչև այն աստիճան, որ շատերը հրաժարվում էին կաթողիկոսանալուց պարտքերի ծանրութեան պատճառով: Այս ինչ վարդապետը մի որևէ ինչ խնամութիւն «չհաս» էր համարում, միւսը պսակուելու իրաւունք էր տալիս. եկեղեցական օրէնսդիտութեան հետ շատերը ծանօթ չէին, իսկ օրէնսդրբերը միանգամայն ձեռագիր, հազուադիւս, թանկագին և որ գլխաւորն է սխալներով լեքը և մէկը միւսի հետ անհամաձայն: Կիւանատներ ոչ միայն վիճակներումը չկային, այլև էջմիածինը շատ քիչ գրութեանց պատճէնները պահած էր: Առաջ նորդների և կաթողիկոսների կարգադրութիւնները և վճիռները շատ անգամ մեծ հակասութիւն էին ներկայացնում իւրեանց նախորդների գործունէութեան հետ:

Ահա այդ տեսակ էր կառավարվում հայոց եկեղեցին, երբ որ Յովսէփ Արղւթեան արքեպիսկոպոսը միջոց ունեցաւ ծանօթանալ Ռուսաստանում օրթոդոքս եկեղեցւոյ վարչութեան հետ և իւր վիճակը բարեկարգելու մտքով դեռ ևս անցեալ դարու վերջերում Հաժտարխանի մէջ հայոց «կոնսիստոր» հիմնեց: Կոնսիստորը բաղկանում էր երեք աւագ քահանաներից, որոնց ատենը կայանում էր առաջնորդի կամ նորա յաջորդի նախագահութեամբ: Ամենայն ինչ վճովում էր ձայնից առաւելութեամբ: Կոնսիստորը կանոնաւոր դիւանատուն ունէր, հաշուագրքեր էր պահում, հաշիւ էր տալիս ու առնում և այլն և այլն: Միով բանիւ Ռուսաստանի վիճակը մի տեսակ բարեկարգութիւն ստացաւ, թէև կոնսիստորների ներքին կարգ ու կանոնները ռուսական էին և համաձայնացրած չէին Հայաստանեայց եկեղեցւոյ հոգւոյն հետ: Յովսէփ արհին վերջերում ինքը զինաւորուեցաւ իւր ստեղծած կոնսիստորի գէմ, բայց արդէն ուշ էր, որովհետև Քարճրագոյն հրամանով հաստատած մի դիւանատուն էր համարվում դա: Երբ 1801 թուին ռուսական իշխանութիւնը հաստատուեցաւ Արաստանում, իսկոյն քաղաքական վարչութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ կառավարութեան և գրութեան մասին տեղեկութիւններ սկսեց ժողովել: ¹⁾ Այնուհետև Արաստանի առաջ-

¹⁾ 1801 թւի սկզբներում ժողոված տեղեկութիւններից երևում է որ այդ ժամանակը Արաստանում երեք վիճակ է եղած՝ 1.) էջմիածնի, որոյ կառավարողն է եղել Մարտիրոս արքեպիսկոպոսը, 2.) Հաղպատի—Սարգիս արքեպ: և 3.) Սանահնի—Արաբել արքեպ: Առաջի վիճակում 3 վանք,

նորդ Յովհաննէս Գեղարդակիրը ինքը սկսեց խնդրել ռուսական տէրութիւնից, որ իրաւունք տան իրան Թեֆլիսում կոնսիստոր բանալու և վիճակը բարեկարգելու: Իւր տեղը կպատմենք թէ ինչպէս իրագործուեցաւ այս մտքը:

Ռուսաստանի առաջնորդ Եփրեմը, ըստ երեւոյթին, շատ զոհ էր իւր վիճակում մտքած բարեկարգութիւնից և Աժտարխանու կոնսիստորից, այս պատճառով նա ցանկանում էր որ Հայաստանի գաւառները ևս նոյն բարեկարգութեան հասնէին: Այս մտքին համակրում էր Պետերբուրգ դանուոյ և այն ժամանակուայ հայոց գործերի վրայ մեծ ազդեցութիւն ունեցող աղայ Մինաս Լազարեանը, որ այդ մասին քանի մի անգամ զրած է թէ Գեղարդակիրն և թէ էջմիածնեցոց: Սակայն խնդիրը միայն կոնսիստորների վրայ չէր: Ներսէսը, Եփրեմը, Լազարեանը, Գեղարդակիրը, Գանիէլը և Գանիէլականը միանգամայն համոզուած էին, որ եթէ Գաւթի օրերով էջմիածնի միաբանութիւնից մի խորհուրդ կամ ատենան կազմուած լինէր, Գաւթի չը պիտի կարողանար իւր բանութիւնները գործ դնել: Եւ ահա յղացաւ մի ատենան կազմելու միտքը, որի իրագործելում ամենից շատ աշխատեց Ներսէսը: Բարի Գանիէլը էջմիածնի մէջ ժողոված տեսնելով իւր կուսակից եպիսկոպոսներին՝ շտապեց բանալ (յուլիսի 23, 1808 թ.) բարձրագոյն խորհրդարանը և ինքը առաջինը երդուեց, որ առանց այդ խորհրդարանի ոչինչ մի նշանաւոր բան չէ գործելու: Ներսէսին միայն այս էր հարկաւոր: Թէև խորհրդարանի անդամներից ամենակրտսերը ինքը Ներսէսն էր, որովհետև սա քանի մի օր առաջ միայն արժանացաւ եպիսկոպոսութեան, բայց իսկոյն ձեռքը ձգեց խորհրդարանի ղեկավարութիւնը, իսկ զառամեալ Գանիէլը անունով միայն մնաց կաթողիկոս: Ներսէսը ուզում էր ստորագրել յիշեալ խորհրդարանին Եփրեմին և Աժտարխանի կոնսիստորը:

որոնցից մինը կուսանաց, երկրորդում 4 վանք և երրորդում 7 վանք: Ընդ ամէնը կաթողիկէ կամ մայր եկեղեցիք 125: Երկու ուսումնարան եղած են՝ մինը Թեֆլիզու վանքի մայր եկեղեցւոյ և միւսը Մոզնու եկեղեցւոյ գաւթում, ուր բոլոր ուսումը քերականութիւնով լրանում էր: Վարժապետները իւրեանց վարձը ստանում են աշակերտներից: Հոգևոր վարչութիւնը Արաստանում ոչինչ դիւանատուն չունէր: Տես АКТЫ Кав. Арх. Ком. Т 1-й. стр. 530.)

այս մտքով նա Գանիէլի ստորագրութեամբ խնդրագիրը ուղարկեց Ռուսաց կայսեր 2) և շուտով հասաւ իւր նպատակին: Նոյնը քանի մի ժամանակից յետոյ եղաւ Արաստանի վերաբերութեամբ: Ներսէսը ուզում էր այդ տեսակ ձեռք բերել նաև Տաճկաստանի վիճակները, բայց այդ ձգտումը ոչ միայն չյաջողեցաւ, այլ նաև զրգուեց իւր դէմ տաճկաբնակ հայոց, որոնք բարձրագոյն խորհրդարանի վրայ սկսեցին նայել ինչպէս կաթողիկոսական իրաւունքները կաշկանդող մի հիմնարկութեան վրայ: Տաճկաստանցոց այս կարծիքը աւելի հաստատուեցաւ, երբ որ յիշեալ խորհրդարանը Գանիէլի բերանով և սորա կենդանութեան ժամանակ կաթողիկոսացու ընտրեց Նիքիւմիս առանց ազգի մասնակցութեան: Բայց Ներսէսը աշխատում էր իւր ստեղծած խորհրդարանին աւելի նշանակութիւն տալ, վասնորոյ երբեմն երբեմն դորան «Սինոդոս» անունն էր տալիս: Սինոդոս բառը միանգամայն շարժեց տաճկաստանցոց զայրոյթը, որովհետև քրիստոնէական եկեղեցիներէ մէջ սինոդոսը ընդհանրական եկեղեցական ժողովն նշանակութիւն ունի և միանգամայն կաթողի-

2) Ահա խնդրագիրը՝ «Ամենողորմած ինքնակալ օգոստափառ թագաւոր կայսր ամենայն Ռուսաց Ալեքսանդր Պաւլովիչ, ինամող և պաշտօնական եկեղեցեաց հաւատացելոց ի Քրիստոս Աստուած: Անդին կենաց և ձեռոց աղօթարար և Յիսուսի Քրիստոսի ծառայ Գանիէլ կաթողիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարք Արարատեան ամբողջ սրբոց Եջմիածնի՝ խոնարհ երկրպագութեամբ նուիրեմ Քրիստոսական ամենաշերմեռանդ օրհնութիւն:»

«Ոչ է ի ծածուկ յամենալուսափայլ գիտութենէ տիեզերաքրնսնին սուրբ կայսերութեան ձերոյ, զի եկեղեցի Հայաստանեայց ի Լուսաւորչէ Հայոց սուրբ Գրիգորէ Մեծէ Պարթեւ մինչև ցայսօր ժամանակի զկառավարութիւն իւր ունի ի վերայ կանոնաց սրբոց Առաքելոցն Քրիստոսի և ուղղափառ Հայրապետացն սրբոց, սակայն մինչ հզօրադաւ բարբարոսական բռնութիւնն ի Հայաստան աշխարհի, խանգարումն եղև ինչ ինչ սու ի նոցանէ կանոնեալ Քրիստոնէական վայելուչ բարեկարգութեանց ընդ որս և բարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովոյն հոգեօրականաց ի պատճառս որոյ և բազում վնասք և աւերմունք յառաջ եկին ազգի և եկեղեցւոյ Հայաստանեաց: Յաղագս որոյ մինչ մեք անձամբ կրեալ զվնասսն այնոսիկ էաք ի գերութեան յերկիրն Պարսից ի Մարաղայ քաղաք՝ կտակաւ աւանդեցաք զրով ամենայն հոգեօրականաց սրբոց Եջմիածնի և յանձնեցաք զհոգաբարձութիւն փոխանորդին մերու՞ գերապատիւ Նիքիւմ արքեպիսկոպոսին Հայոցն Ռուսաց

կոսական իրաւունքներից բարձր իշխանութիւն: Այս էր պատճառը, որ Նիքիւմի օրերով տաճկաստանցիք փոքր առ փոքր սառեցան Եջմիածնից և Սսի կաթողիկոսութեան վարկը բարձրացրին: Երբ որ 1831 թուականին Պասկեվիչ հրամանատարի օրերով քննվում էր Եջմիածնի Սինոդոսի խնդիրը, Շահան Զրպետը և Սերօբէ եպիսկոպոսը մեկնեցին ռուսաց տէրութեանը, որ եթէ Եջմիածնի խորհրդարանը սինոդոս անունը կրէ՝ երբէք չը պիտի յաջողի կաթողիկոսի իրաւասութիւնը զօրացնել տաճկաբնակ հայոց վրայ: Պասկեվիչը համաձայնեցաւ և յիշեալ տիտղոսի գործածութիւնը յետաձգուեցաւ, մինչև որ 1836 թուին Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսը գործը կրեց:

Գ.

ՆԵՐՍԷՍԸ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Ներսէսը 1808 թուի մարտին Եջմիածին հասնելով իսկոյն սկսեց իւրեան յատկացեալ գործունէութիւնը: Նորա այդ տարին զրաժ նա-

« տանու և գործակատարին մերում հարազատ հպատակին տէրութեան
 « ձերոյ Մինասայ Նիազարեանց, զի նոքա կարգադրեցին և ամենաողորմած
 « մած բարեհաճութեամբ ձեր հաստատեցին և հրատարակեցին: Այլ քան-
 « զի բարերար ակնարկութեամբ ձեր և ողորմութեամբ Տեառն Աստուծոյ
 « ազատութիւն գտաք մեք մեղէն, ահաւասիկ կարգադրեցաք զսոյն բարեկարգութեան
 « կառավարիչ առաքելաւանդ սուրբ ժողովն հոգեօրակա-
 « նաց և ամենախոնարհարար խնդրեմք ի բարերար սուրբ կայսերութե-
 « նէ ձեր, զի բարեհաճեցիք ամենաողորմած բարձրահրաման յատուկ հրովար-
 « տակաւ տալ զանդրդուելի հաստատութիւն այնմիկ ի ներքոյ վերատեսու-
 « չութեան օրինաւոր ծայրագոյն պատրիարքի ամենայն Հայոց և զհոգեօրակա-
 « րական կառավարութիւնսն ամենայն Հայոց և զկանցիցսօրն և զհոգեօրակա-
 « րական կառավարութիւնսն ամենայն Հայոց եղևոց ընդ հովանեաւ Քրիս-
 « տոսատիպ բարերար կայսերութեան ձերոյ յանձնել ի ներքոյ կարգադրու-
 « թեան սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի Արարատեան ամբո-
 « ռոյն սրբոց Եջմիածնի կանոնօք և ծիսիւ Հայոց: Մեծ են ողորմութիւնք
 « ամբողջ ամենամեծ կայսերութեան ամենայն Ռուսաց ի վերայ ազգի և
 « եկեղեցւոյ Հայոց և առաւել ևս մեծանան սովաւ, առ որ և մեք ողջոյն
 « ազգաւ եմք և միամբ ամենաշերմեռանդ հպատակութեամբ: Կարող և
 « բարձր օգոստոս սուրբ կայսր, ձերոյ մեծութեան ամենախոնարհ ծառայ
 « և աղօթարար Գանիէլ: 1808. օգոստոսի 11.»

մակնների թիւը թէ կաթողիկոսի կողմից, թէ խորհրդարանի — բազմաթիւ են: Մեր ձեռքին գտնուած գրութեանց պատճեններից միայն ամենանշանաւորները առաջ բերելով, ուշադրութիւն ենք դարձնում Ներսէսի այն համարձակ մտքի վրայ, որ նա առաջինը սկսեց Ֆրանսիայի և Ռուսիայի կայսերների հետ ուղղակի զրադրութիւն անել: 1808 թուի յունիսին Պարսկաստանից Էջմիածնի վրայով վերադառնում էր իւր հայրենիքը Նապօլէոնի ուղարկած զեսպանը. սորա ձեռքով Ֆրանսիայի մեծ կայսերը մի նամակ գրուեցաւ Դանիէլէ կողմից, որ մի քաղաքավարական գրութիւն է, որի արդիւնքը պիտի լինէր սէր և բարեկամութիւն Ֆրանսիայի կայսեր և Հայոց կաթողիկոսի մէջ: ³⁾

Պէտք է ասել, որ զեռ իշխան Յիցիանովի Երեւանը պաշարելու ժամանակ, երբ ուրեմն Ռուսաստանը Պարսկաստանի հետ պատերազմ ունէր, Աղէքսանդր կայսեր և Նապօլէոնի մէջ նմանապէս

3) «Մեծ Նապօլէոն խաչապսակ ինքնակալ Օգոստոս կայսր Ֆրանսիայու՝ սիրող բարեպաշտութեան, ամենաողորմած թագաւոր և պաշտպան եկեղեցւոյ հաւատացելոց, Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլէ կաթողիկոս... Էջմիածնի. իմանալոցն զօրութեամբ ներկայացեալ առաջի բարձրագոյն աթոռոյ սուրբ թագաւորութեան ձերոյ խոնարհ երկրպագութեամբ զհոգևորական օրհնութիւնս հանդերձ Քրիստոսական ողջունիւ ձեզ մատուցանեմ: Յաւիտենից ժամանակաց կայսերք Հռովմայեցոց մեծագոյն զթասիրութեամբ բարերար և ողորմած են եղեալ միշտ թագաւորաց և քահանայապետաց հայոց և ողջոյն ազգի նոցա և մինչև ցայսօր ժամանակի անմոռաց ունի եկեղեցի Հայաստանեայց և պարծի նովաւ միշտ, բայց ի բազմանալ անտանելի նեղութեանց և աշխարհակործան մեծամեծ խռովութեանց յԱսիայ և մանաւանդ յաշխարհս Հայոց, որ ըստ օրէ զկեալ յամենայն բարերարողութեանց, ահա հարիւրաւոր ամբ են, զի վասն ժամանելոց ի յեախն նուաստութիւն իբրև ի մոռացոն եմք յամենալուսափայլ մտաց հասարակախնամ կայսերաց Հռովմայեցւոց: Ուրախ եմք և առաւելապէս զօհանամք զԱստուծոյ և զանպատում հնորաց ողորմութեան նորա առ մեզ. եկն ի սմին ժամանակի ի Քրիստոսակալ աթոռս Արարատեան խոհեմութեամբ և իմաստութեամբ հոչակեցեալ զեսպան ձերոյ մեծահրատման կայսերութեան առ բարեբարոյ և ողորմածագոյն բարձր աստիճան Շահն հզօրաց Պարսից և առ յատուկ պաշտպանն սրբոյ Աթոռոյս Մերում Ապպաս միրզայ որդի նորա և ողորմութեամբ և մարդասիրութեամբ և իմաստութեամբ զե-

թշնամական էին յարաբերութիւնները: Նապօլէոնը կամենալով Ասիայի մէջ վնասել ռուսաց՝ գաղտնի կերպիւ Բօմիէ և Ժօբէր անունով զործակալներին ուղարկեց պարսից Բաբայ խանի մօտ սորան իւր օգնութիւնը առաջարկելով: Յիշեալ անձինք ծայտեալ կերպիւ և հայ վաճառականների օգնութեամբ անվտանգ անցան Վանի վրայով և հասան Պարսկաստան, թէև իշխան Յիցիանովը և ապա կոմս Գուրովիչը շատ աշխատեցան մի կերպ բռնել դոցա: Գեսպանութիւնը անյաջող եղաւ, պարսիկները չընդունեցին Ֆրանսիայի օգնութիւնը և Նապօլէոնի զործակալները դարձեալ հայոց օգնութեամբ անվնաս վերադարձան (Տես АКТЫ К. А. К. Т. 3-й стр. 447): Քանի մի ժամանակից յետոյ Նապօլէոնը նորից զեսպան ուղարկեց Բաբայ խանի մօտ Ժան Բաթիստ Բուասսօ անձը, որ անգղիացոց թշնամական զրդմամբ դարձեալ յաջողութիւն չգտնելով ստիպուած էր վերադառնալ: ձանապարհին Բուասսօն մտաւ Էջմիածին և մեծ ընդունելութիւն գտաւ. թէ ինչ և ինչ խօսուեցաւ այստեղ մեզ

և բապատուեալ բարձր բարեմունդ արեգական նշանակիր Ժօմ Բաթիստ և Բուասսօ, զոր կարեմք հանդուճատիպ ընդունիլ նշան մեծագոյն ողորմութեան Աստուծոյ, որպէս երբեմն հայրն աշխարհի զաղաւնին, յորժամ և ի տապան անդր տատանեալ ծիլիւր յերեսս աշխարհահեղձոյց ջուրց: և Կաւ ևս կարէ պատմել զմէնջ յիշեալ զեսպանն ձերոյ ամենաողորմած Աստուածատիպ սուրբ կայսերութեան, այլ մեք վստահացեալ Աստուածազաւթ ողորմութեանս ձեր և բարերար ակնարկութեանս (?) նախնի աթոռակալաց ձերոց աստէն ի ծագս տիեզերաց ի ծունկս անկեալ առաջի ամենաողորմած աթոռոյ ձերոյ բարձրագոյն կայսերութեան որպէս աթոռակալի *) յանձն առնեմք հնորաց աշխարհապարած ողորմութեան և մարդասիրութեան ձերոյ զմեզ և զաթոռս..... և զամենայն հոգևորականս և զմարմնաւորականս հայոց և ամենախոնարհաբար խնդրեմք զի ուր և տարածեսցի... աթոռոյ ձերոյ կայսերական մեծութեան, եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց: Ողջ լեր ամենաողորմած Օգոստոս սուրբ կայսր և մեք յուսով մեծաւ մնամք ողջոյն ազգաւ աղօթարար վասն անգին կենաց ձերոց և վասն բոլոր պալատի ձերում և այլն. Դանիէլէ 1808. յունիս 16: Հասցէի վրայ գրած է՝ Նորին կայսերական մեծութեան ինքնակալի Ֆրանսայու և զբալի (կօրօլ) և իտալիոյ օգոստափառ մեծ Նապօլէոն ամենողորմած թագաւորի մերում՝ յամենափառասիր պալատն իւրոյ կայսերական բարձրութեան:

*) Կ ե ա ա զ ր ու թ ե ա մ բ ա ն ց ա ծ տ ե ղ ե ր ը չ ե ն կ ա ր դ ա ց վ ու մ :

յայտնի չէ. գրութիւններից երեւում է որ միաբանութիւնը բերանացի յանձնարարութիւններ ունի արած Ֆրանսիայի կայսեր անուանով. յանձնարարութիւնները երևի այնպիսի կէտերից էին գոյացած, որոնց թղթի վրայ գրիլը անյարմար են համարած Էջմիածնեցիք: Դեսպանի սիրտը գրաւելու համար, Գանիէլը անձամբ ընծաներ է մատուցանում նորան, հետն էլ մի գրաւոր ուղերձ ⁴⁾: Երևի Բուսսոսի խորհրդով Գանիէլը մի գրութիւն էլ ուղղում է Ֆրանսիայի «հաւատոյ և օրինաց» նախարար Փորտալիսին ⁵⁾: Կարծիք չկայ որ այդ

4) «Մեծ Նապօլէոն տիեզերահրաման կայսեր Ֆրանցյալու ամենախոհեմ դեսպան՝ մեծագոյն փառաց և պատուոյ արժանաւոր Ժօմ Բաթիստ և Բուսսոս, նշանակիր արեգական, ողորմած տէր: Ուրախ եմք զալստեամբ և ձեր ի լուսանկար Քրիստոսահիմնաթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, ուրախ է և ինքն իմանալեալէս և տաճարն Աստուծոյ, զի ընկալաւ զհրեշտակը ամենաողորմած կայսեր, որով կարէ ունիլ զպարծանս: Զերմեռանդութիւն մեր մեծ է յոյժ, որպէս և կարողես զգալ, բայց զի ականատես եղեր մեծագոյն աւերութեան, հաւաստի եմք թէ ցաւակիցես մեզ: Մատուցաք ձեզ ոչ որպէս պարզե արժանաւոր, յորմէ այժմ անձեռնհաս եմք, այլ միայն ի նշան մեծագոյն սիրոյ և ուրախութեան մերոյ և յիշատակ բարեկամութեան զմի մատանի զմրուխտ և զմի ոսկեալ արծաթեայ բաժակ ջրոյ: Զորս ընկալցես սիրով և վայելեացես հանդերձ օրհնութեամբ սրբոցն որք աստ և հոգևորական հնորհօք սրբոյ տաճարիս Աստուածայնոյ: Ուր ընդ քեզ եղիցի և սէր սրբոյ տաճարիս, մնացէ ի սրտի ձերում անմուտաց: Ողջ լին և մեք եմք և մնամք ամենայն միաբանութեամբ աղօթարար վասն յաջողութեան ճանապարհի և յառաջագրութեան ձերոյ: Գանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց: 1808. յունիսի 16. Եջմիածին: (Զսոյն զիր ընդ թասին և մատանւոյն ինքնին մատոյց սրբազանն (Գանիէլ) ի ներկայութեան իւրում, վասնորոյ հասցէ ոչ ունի: Սորա քաղաքն Մարսիլեա էր):

5) «Քաջ խորհրդական մեծ կայսերութեան Ֆրանցյալու և մինիստր և հաւատոյ և օրինաց մեծ իշխան Փորտալիս, ողորմած տէր և բարերար և յուսացողաց: Աղօթարար ձեր և... Գանիէլ կաթողիկոս... ՚ի Տէր խընդալ: Բարերարութիւնք և մարդասիրութիւնք իշխանաց Հռոմէացւոց առ ազգս Հայոց յաւուրս նախնեաց մերոց երևելի են յոյժ, բայց յորմէ հետէ բարձաւ տէրութիւն և թագաւորութիւն յազգէ մերմէ և զօրացաւ իշխանութիւնն գերջաց մերոց ըստ ողբերգութեան Սաղմոսին՝ մինչև ցայսօր ժամանակի իսպառ մոռացեալ եղաք ի սրտէ որպէս զմեռեալ յաւիտեանից և համարեցաք որպէս զանօթ կորուսեալ: Գոհանամք զԱստուծոյ և անոխակալ Տեառնէ մերմէ, զի ի սմին ժամանակի բարերար ակնար-

գրութիւնները անդ հասած են, բայց թէ ինչ պատասխան ստացան Էջմիածնեցիք կամ թէ Նապօլէոնը ուզեց արդեօք պատասխանել Գանիէլին—մեզ յայտնի չէ: Աւելի պարզ է Գանիէլի կողմից Գերմանիայի (Աւստրիայի) կայսեր ուղղած հետևեալ գրութեան միտքը ⁶⁾: Գրիգոր Աղքերմանցի վարդապետը, որ երբեմն Յովսէփ

և կութեամբ ուղղեաց առ մեզ գճանապարհ խոհեմութեամբ և իմաստու թեամբ բարեհոգակեալ արեգական նշանակիր Ժօմ Բաթիստ Բուսսոս և դեսպանն անպարտելի հզօրեղ կայսերութեան Ֆրանսյալու առ բարեսիրտ և աղատախնամ բարձրագահ Շահն Պարսից և առ յատուկ պաշտպանն և բարերարն Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի բարերարոյ և քաղցրագութ Արքաս Միրզայ որդի և ժառանգն նոցա: Համարիմք թէ բացեալ իցեն մեզ դրունք ողորմութեան ամենողորմած Արարչին, վասնորոյ ցնծութեամբ հողոյ մերոյ փութամբ ներկայանալ ձերում փառաւորութեան ի ձերն սոյն այս փարտեսի (?), զոր մատուցանեմք ձեզ իբրև զնախկին պտուղ ջերմեռանդութեան սիրոյ մերոյ: Զամենայն որպիսութիւն մեր և Արարատեան սրբոյ Աթոռոյն կարէ բաւականապէս յայտնել դեսպանն, որ եղև ականատես և է զիր կենդանի. մեք միայն յուսովն զոր ունիմք ի յիշատակարանաց նախնեաց մերոց և վստահանամք ինչորեւ միայն զի ակնարկութիւն հողոյ ձերում ի պատիւ Քրիստոնէական սուրբ հաւատոյ տարածեալ առ մեզ սիրով, մատուցալ չիք առ նորին ամենողորմած կայսերութիւնն զգիր մեր զօր ընդ այսմ ի ձեռն յիշեալ դեսպանին մատուցաք խոնարհութեամբ: Հաւաստի առ նեմք ձեզ, զի յիշատակութիւն բարերարութեան ձեր յաւիտեանս ժամանակաց ըստ սուաջնոց նախնեաց ձերոց մնայ անմոռանալի առ ամենայն ազգս Հայոց: Եւ մեք նովաւ հանդերձ եմք և մնամք զամենայն աւուրս կենաց մերոց աղօթարար վասն կենաց ձերոց... Գանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց: 1808. յունիս 16. Եջմիածին:

6.) Ամենալուսափայլ տիրող ինքնակալ հզօր կայսր Հռոմայ և Գերմանիոյ Ֆրանց երրորդ ամենաողորմած թագաւոր և պաշտպան հաւատացելոց: Աղօթարար անգին կենաց ձերոյ և... Գանիէլ կաթողիկոս և այլն... Սէր և խնամակալութիւն կայսերաց Հռոմայեցւոց առ թագաւորս և առ քահանայապետս և առ ամենայն հասարակութիւն ազգի հայոց տարածեալ առատութեամբ յաւիտենից ժամանակաց, յիշատակագրութեամբ նախնեաց մերոց այսօր ևս ներգործէ առ ամենայն ազգն Հայոց զմեծ մխիթարութիւն: Այլ քանզի օր ըստ օրէ տիրեաց անբախտութիւն ի վերայ ամենայն հայրենեաց հայոց՝ բարձաւ թագաւորական ճոխութիւնն, մատնեցաւ քահանայապետութիւնն յանտանելի տառապանս ընդ բունութեամբ բարբարոսաց և ցրուեցաւ ամենայն ազգն հայոց յերես ամենա ներկրի իբրև զսխարս, որոց ոչ գուցէ հովիւ,


կաթողիկոսի սպասաւոր էր և յետոյ Գաւթի ձեռքով կախկոպոս
օժուեցաւ ու Գանիէլի սաստիկ հակառակորդն էր, այժմ Եփրեմից
հալածուած՝ ապաւինած էր Սուչովա քաղաքով՝ գտնուած քանի
մի հարիւր տուն հայերին և իբրև Ռուսաստանի սահմանից դուրս
Եփրեմից վախ չունէր: Կարծում ենք որ Ներսէսից գրգած՝ Գանիէլը

« պակասեցաւ ամենայն միջնարութիւն յամենայն հասարակութիւնէ հոգևո-
« բականաց և մարմնաւորականաց հայոց մինչ իսպառ և եղաք առհասա-
« բակ ըստ մարդարէական բանին՝ որպէս մեռեալ յաւիտենից և որպէս
« զանօթ կորուսնալ, մտաւեցալ ի սրտէ ամենայն մեծաց և փոքունց բա-
« րերարացն հաբց մերոց: Այլ գոհանամք զԱստուծոյ, զի որպէս զերիս
« մանկունս ի մէջ զգալի հրոյն Բարխիւմի, նոյնպէս և զմանկունս եկե-
« ղեցոյ Հայաստանեայց ի մէջ իմանալի հրոյ բարբարոսական բռնու-
« թեանց պահպանէ մինչև ցայսօր ուղղափառ խոստովանութեամբ սուրբ
« Աստուածութեան իւրոյ: Շնորհ ունիմք և զմեծ ողորմութենէ ամենողոր-
« մած աթոռոյ Աստուածագութ կայսերութեանէն ամենայն Ռուսաց, զի ի
« հարիւրաւոր ամաց հետէ յատուկ մարդասիրութեամբ հայեցեալ առ
« ամենայն անայցելու աղքն Հայոց, յաւել ամենայն հոգևորականաց և
« մարմնաւորականաց զմեծ ապահովութիւն ի ձեռն ամենողորմած հրո-
« վարտակի իւրոյ յուսադրեալ զկաթողիկոսն ամենայն Հայոց և զիշխանս
« և զքաջազունս և զաղնուազդիս և զամենայն աղքն Հայոց՝ ունիլ ի ներ-
« քոյ բարձրագոյն խնամոց և հովանաւորութեան իւրոյ, և զամենայն
« աղքն Հայոց եղեալս ի տէրութեան իւրում զաւանութեամբ սուրբ Ղու-
« սաւորչի Հայաստանեայց մեծի Գրիգորի Պարթևի, յանձնելով ի ներքոյ
« կարգադրութեան Արարատեան աթոռոյ կաթողիկոսին ամենայն Հայոց
« հոգևորական կանոնաւ և եկեղեցական կարգաւ, տարածեաց առ ամե-
« նայն կուսակալս սահմանաց տէրութեան իւրոյ զյատուկ հրովարտակ,
« ոչ ընդունել ի ներքս ի սահմանս ռուսաց զոր ի կարգաւորաց հայոց
« որպիսի և իցէ աստիճանաւ, առանց վկայական գրոյ Արարատեան կա-
« թողիկոսին, և այսպէս չնորհեաց ամենայն Հայոց մերձաւորաց զմեծ
« խաղաղութիւն և հոգևորականաց զմեծագոյն միջնարութիւն: Առաւե-
« լապէս միջնարեալ լինիմք զի և ամենողորմած հովանաւորութիւն աթո-
« ռոյ սուրբ կայսերութեան ձերոյ տարածեալ նոյնպէս ի վերայ Հայոց
« եղեցոց ի սահմանս հզօր տէրութեան ձերոյ ի Աջով (Սուչովա) քաղաք
« և յայլ և այլ տեղիս ապահովացուցեալ է գնոսա ոչ սակաւ: Բայց սա-
« կայն այս 30 ամ լինի յորմէ հետէ չէ եղեալ ի նոսա այցելութիւն Արա-
« րատեան աթոռոյն և կաթողիկոսին ամենայն Հայոց և չէ հանդիպեալ ի
« մէջ նոցա կախկոպոս կամ վարդապետ քարոզիչ և վերատեսուչ հաւա-
« տոյ և եկեղեցական կարգաց և չեն ունեցեալ զիմաստուն քահանայ կամ
« օրէնսդէտ ուսուցիչ, առ որ բազում ինչ պակասեալ է ի նոսա յուղղու-
« թենէ կարգաց և կանոնաց եկեղեցոյ Հայաստանեայց և բազում աղի-

536-2009
(4989/41)

այդ նամակը գրած է Աւստրիայի կայսեր, որին ազգերումէ չը ճանա-
նաչել Գրիգորին հայոց կախկոպոս և միանգամայն Աւստրիայի հայոց
խափու ենթարկել էջմիածնի իրաւասութեանը: Մեր ձեռքում գրտ-
նուած պատճէնի վրայ կար հետևեալ մակագրութիւնը: «Որով-
« հետև երկու կերպ էին գրեալ, վասն գրելոյ առ կայսրն Գերմա-

« տութիւն ևս ունակացեալ ի մէջ ողորմելի ժողովրդեան մերում: Այլ և
« ի վրայ այնորիկ յամի 1807 յամսեանն օգոստոսի՝ սուտ կախկոպոս
« մի Գրիգոր անուն, որ վասն լինելոյ իւրոյ մատնիչ Արարատեան
« աթոռոյն և խանգարիչ բարեկարգութեան հայրենի ազգին արգելեալ յա-
« մենայն հոգևոր պաշտօնէ արտաքսեալ կայր յեկեղեցոյ դատաստանաւ
« ժողովոյ բազմութեան արքեպիսկոպոսաց, կախկոպոսաց, վարդապետաց
« և աւագերիցանց հարիւրաւորաց ի զուլս 30 ամաց (?) մտեալ առ նոսա
« խարէութեամբ, պաշտեալ է ի Աջով (Սուչովա) քաղաք զպաշտօն կախ-
« կոպոսութեան և սերմանէ անդէն զբազում տարածայնութիւնս և գայ-
« թակղութիւնս...: Վասնորոյ, քանզի կոչիցիմք մեք հովիւ և կաթողիկոս
« ամենայն Հայոց, ի ծունկս անկեալ առաջի ամենողորմած աթոռոյ ձերոյ
« խնդրիմք ամենախոնարհաբար, զի թէ գտցէ չնորհս առաջի սուրբ կայ-
« սերութեան ձերոյ եկեղեցի Հայաստանեայց և ժողովուրդ սրբոյն Գրի-
« գորի մեծի Պարթևի, մի խնայեալիք զբարերարութիւն աթոռոյ սուրբ
« կայսերութեան ձերոյ ի հոգւոց և ի մարմնոց հոգևորականաց և մարմնա-
« ւորականաց Հայոց գտանելոց ի հովանաւորութեան մեծաշուք հզօր
« թեոց ձերոց, այլ զթացեալ աստուածաբար մարդասիրութեամբ՝ զբարե-
« բարութիւնս նախնի կայսերացն Հռովմայեցոց առ աղքն հայոց՝ կրկին
« նորոգեալիք և համաձայն նորին կայսերական մեծութեան ամենայն ու-
« սաց ամենողորմածաբար բարեհաճեալիք կարկառել զմեծ ողորմութիւն
« ձեր առ ամենեսին և յանձնել ի ներքոյ կարգադրութեան Արարատեան
« աթոռոյ կաթողիկոսութեան ամենայն Հայոց հոգևորական կանոնօք,
« եկեղեցական կարգօք զաղքն հայոց եղեալս ի տէրութեան ձերում դաւա-
« նութեամբ սրբոյ եկեղեցոյ Հայաստանեայց, և հրամայել սահմանակա-
« լաց, զի առանց վկայելոցն զոր կաթողիկոսին Արարատեան աթոռոյ
« մի զք ի հոգևորականաց հայոց ունողաց զգաւանութիւն եկեղեցոյ
« Հայաստանեայց ընկալցին ի ներքս ի սահմանս սուրբ կայսերութեան
« ձերոյ և չնորհել նոյնպէս զբարձրահրաման մեծ հրովարտակ հաստատեալ
« մեծ կնքով ամենաօգոստափառ կայսերութեան ձերոյ առ ի պահպանել
« ի տաճարի աթոռոյն Արարատեան վասն յաւիտենական յիշատակի ողոր-
« մութեան և բարեհաճութեան ձերոյ: Ողջ լիք ամենողորմած Օգոստոս
« կայսր և ողորմութեամբ Աստուծոյ երկնաւորի եղիցին աւուրք ձեր իբրև
« դաւուրս երկնից. ամէն...: Գանիէլ կաթողիկոս, յէջմիածին. 1808.
« ամսեանն (?)»



« նացւոց (Աւստրիայ)՝ մեք ևս առաջինն ըստ մի կերպին յառաջար-
 « կելոյ նոցա գրեցաք այնպէս ընդ երկար, և միւս ևս ըստ միւսում
 « կերպին գրեցաք ի ներքոյ ահա և զերկոսին ևս յղեցաք առ Եփ-
 « րեմ՝ արքեպիսկոպոս առաջնորդն Ռուսաստանու Հայոց, զի զորն և
 « կամեցի զայն մատուցէ՞: Կարծում ենք որ այս մակագրութիւնը
 « Ներսէսինն է: Շատ զանազանութիւն չունի երկրորդ օրինակը առա-
 « ջինից ⁷⁾: Այն է միայն, որ այստեղ Գանիէլը խոհեմաբար լռած է
 « Գրիգոր եպիսկոպոսի մասին: Չգիտենք թէ այդ երկու գրութիւննե-
 « րից ո՞րը մատուցուեցաւ Աւստրիայի կայսեր: Մենք աւելի հաւանա-
 « կան ենք համարում ենթադրել, որ Եփրեմը համաձայն չգտնուեցաւ

7.) Առաջի գրութիւնից զանազանուող կէտերը միայն սուքա են՝
 « Շնորհք ունիմք և զմեծ ողորմութենէ Ատուածազուլթ կայսերութեանն ամե-
 « նայն Ռուսաց, զի յատուկ մարդասիրութեամբ ի ձեռն ամենողորմած
 « հրովարտակի իւրոյ յուսադրեալ զկաթողիկոսն ամենայն Հայոց և զիշ:
 « խանազունս և զքաջատոհմիկս և զազնուաղբիս և զամենայն ազգն և
 « տարածէ զմեծ հովանաւորութիւն իւր յաւել ամենայն հոգևորականաց և
 « մարմնաւորականաց հայոց զմեծ ապահովութիւն: Առաւելապէս մխիթա-
 « րեալ լինիմք, զի և հովանաւորութիւն ամենողորմած աթոռոյ հօր կայ-
 « սերութեան ձերոյ տարածեալ նոյնպէս ի վերայ հայոց եղելոց ի սահմանս
 « տէրութեան ձերոյ ի Սչով քաղաք (Սուչովա) և յայտեղիս ապահովա-
 « ցուցանէ զնոսս ոչ սակաւ: Բայց սակայն այս 30 ամ լինի զի առանց
 « հոգևորական այցելութեան են նոքա և չէ հանդիպեալ ի մէջ նոցա վե-
 « րատեսուչ հաւատոյ և եկեղեցական կարգաց եպիսկոպոս կամ վարդապետ
 « Արարատեան աթոռոյն, զորս առաքէ կաթողիկոսն ամենայն Հայոց առ
 « ամենայն ազգն հայոց եղելոց ընդ ամենայն աշխարհ, և չունելով օրէնս-
 « գէտ քահանայ և իմաստուն ուսուցիչ, բազում ինչ պակասեալ է ի նոսս
 « յուղղութիւնէ կարգաց և կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց: Ասան-
 « որոյ խնդրեմք ամենախոնարհաբար, զի թէ գտցէ շնորհս առաջի սուրբ
 « կայսերութեան ձերոյ եկեղեցի Հայաստանեայց և ժողովուրդ սրբոյն
 « Գրիգորի մեծի Պարթևի, զբարերարութիւնս նախնի կայսերացն Հռո-
 « մէացւոց առ ազգն հայոց կրկին նորոգելով, համաձայն նորին կայսե-
 « րական մեծութեան ամենայն Ռուսաց ևս և այլոց որոց ի սահմանս
 « գտանին յազգէ հայոց, բարեհաճեսցիք ամենողորմածաբար կարկառել
 « զմեծ ողորմութիւն ձեր և առ ազգն հայոց եղեալս ի տէրութեան ձե-
 « րում դաւանութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց, յանձնել ի ներքոյ կար-
 « գաղորութեան կաթողիկոսին ամենայն հայոց հոգևորական կանօնօք և
 « եկեղեցական կարգօք և հրամայել ամենայն սահմանակալաց, զի առանց
 « վկայելոցն և այլն:» (մնացածը տես ծանօթ: 6.)

այդ գրութեանց ոչ մինի հետ և իւր կողմանէ ուղարկած է Գա-
 « նիէլին մի երրորդ տեսակ նամակի օրինակ ⁸⁾, որի մէջ կաթողիկոսը
 « ուղղակի յայտնում է կայսեր, որ նորա թագաւորութեան մէջ գրա-
 « նուած հայոց նմանապէս յանձնում է Ռուսաստանի առաջնորդ
 « Եփրեմի իրաւասութեանը: Մի այսպիսի թուղթ գրուեցաւ և Ռու-
 « սաց կայսեր ⁹⁾: Որքան մեղ յայտնի է, այս միտքը ընդունուեցաւ

8.) Նամակ Գանիէլի առ կայսրն Գերմանիոյ Ֆրանց երրորդ: Սովո-
 « րական ձեերից յետոյ՝ « յայտնի է ինքնին ինձ՝ զի որպէս ոչ ուղիղ ըն-
 « թանայ նաւ առանց հմուտ նաւավարի, այնպէս և ոչ եկեղեցին Աստու-
 « ծոյ կարէ ունել ուղիղ կառավարութիւն առանց հանձարեղ առաջ-
 « նորդի: Ասանորոյ քանզի այս 30 ամ առանց վերատեսչութեան է եկե-
 « ղեցի հայոց, որ գտանի ի ներքոյ հովանաւորութեան ամենաբարեպաշտ
 « սուրբ կայսերութեան ձերոյ ի քաղաքի Սչով (Սուչովա), զի մինչ իս-
 « պառ տիրեսցին մեզ մեզք՝ յաղագս ամենեկին անփոյթ լինելոյ վասն
 « նոցա, հարկադրեալ եղէ այժմ կացուցանել նոցա առաջնորդ զփոխա-
 « նորդն իմ և զառաջնորդն ամենայն հայոցն Ռուսաստանու գերապատիւ
 « Եփրեմ սրբազան արքեպիսկոպոսն, որ զխաւորագոյնն է ամենայն հո-
 « գևորականաց հայոց և մերովս կաթողիկոսական կոնդակաւ յանձնեցաք
 « նմա զհոգևորական վերատեսչութիւն ամենայն ազգիս հայոց, որք գտա-
 « նիցին ի ներքոյ լայնածաւալ հովանաւորութեան ձերոյ դաւանութեամբ
 « եկեղեցւոյ Հայաստանեայց: Խնդրեմ ամենախոնարհաբար, զի ձերդ
 « կայսերական բարձրութիւն ամենողորմածաբար բարեհաճութեամբ շնոր-
 « հեսցիք յիշեալ փոխանորդին մերոյ զբարձրահրաման հրովարտակ վասն
 « համարձակ վարելոյ զամենայն գործս հոգևորականս և եկեղեցականս
 « պատկանեալս առաջնորդութեամբ իւրոյ ըստ կանոնաց եկեղեցւոյ Հայաս-
 « տանեայց: Եւ հրամայել ամենայն կայսերական կառավարչաց և վերա-
 « կացուաց ձեռնառու լինիլ նմա և առ ի նմանէ կարգեալ գործավարացն
 « յորժամ խնդիր լինիցի ի նոցանէ առ ինքեանս ի պատահմունս հարկա-
 « ւորացն, որք վերաբերիցեն առ հոգևորական կառաւարութիւն: Արդարեւ
 « շնորհ մեծ առնես, որով և զբոլոր եկեղեցի Հայաստանեայց պար-
 « տաւորեսցես ամենողորմած աթոռոյ սուրբ կայսերութեան ձերոյ մինչև
 « յաւիտեան: Ողջ լեր և այլն... Գանիէլ կաթողիկոս ամենայն հայոց: Յամի
 « Տեառն 1808. յամսեանն յուլիսի: Յաթոոս ամենայն Հայոց ի սուրբ
 « Էջմիածին՝ որ յԱրարատ:»

9.) Գանիէլի գրութիւնը Ռուսաց կայսեր ուղղած: Սովորական ձեե-
 « րից յետոյ: «Որովհետև յոյսն ամենայն հաւատացելոց բարեգութիւն Աստ-
 « ուած ողորմեալ ժողովրդեան իւրոյ ընակեցելոց ի սահմանս Մօլտավիոյ
 « և Վալաքիոյ և այլոց, ժողովեաց զնոսս ի ներքոյ ամենաբարձր հովա-
 « նաւորութեան տիրեղբարտարած թեոց ամենողորմած և բարեբար սուրբ

Աւստրիայի կողմից, սակայն շատ սակաւ ժամանակ տեւեց Ռուսաստանի առաջնորդի իշխանութիւնը նոցա վրայ, ապա Կ. Պոլսոյ պատուիրարքի իրաւասութեան տակ մտան ոչ միայն Մօլդաւիայի և Վալաքիայի այլ և ամբողջ Եւրոպայի հայերը:

Այստեղ կանգ առնելով՝ մենք հրաժարվում ենք Դանիէլի կամ Ներսէսի յիշեալ գրութիւններին Նապօլէօնին և Ֆրանց երկրորդին՝ մեկնութիւն տալուց: Այդ կայսրներից առաջինը Ռուսաստանի ոխերիմ թշնամին էր, իսկ երկրորդը նոյն միջոցներին բարեկամ: Բնականապէս Նապօլէօնի հետ բարեկամացողը չէր կարող սէր զգալ դէպի Ռուսիայ և Աւստրիայ և փոխադարձաբար: Թէ ինչ էր շարժառիթը Նապօլէօնի հովանաւորութեանը զիմելու ու յետոյ Աւստրիայի կամ Ռուսիայի պահակալներին մտերմական նամակներ գրելու՝ մեզ անհասկանալի է, որովհետեւ չենք ուզում հաւատալ, թէ միմիայն առաջնորդական կամ որեւիցէ եպիսկոպոսական շահերի վերաբերեալ խնդիրներ եղած լինին զրդիչները, և ոչ մի աւելի բարձր քաղաքական գաղափար, որ ամէն կերպ աշխատուած է ապերախտ թղթից ծածուկ մնալու: Այս մեր կարծիքը աւելի հաւանական է թվում մեզ՝ երբ մտաբերում ենք, որ արդէն թէ կաթողիկոսին և թէ Եջմիածինը իւր ձեռքն էր ժողովել երիտապարզ Ներսէս եպիսկոպոսը, որի բարձր ձգտումներին և միևնոյն ժամանակ փառասիրութեանը թէ այն ժամանակ թէ յետոյ սահման չկար:

« պատկերի իւրոյ՝ ձերոյ կայսերական մեծութեան, ուրախ եմք առաւելապէս և ազգայնաբար զմարգասէրն Աստուած, այնմիկ ողորմութեան իւրոյ « արժանի արաոցէ զքնակեալս յԱրարտ և յամենայն պահմանս Հայաստան աշխարհի: Այլ քանզի բազում են ի յիշեալ սահմանսն ժողովուրդք « ի մեր ազգէ գաւառութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց, որոց հարկաւոր է արժանաւոր հողերական կառավարիչ և բարեբարոյ վերատեսուչ, « վասնորոյ մեք մերովս կաթողիկոսական կոնդակաւ որպէս ի վերայ « ամենայն ժողովրդեան Հայոց բնակելոց ի Ռուսաստան, նոյնպէս և ի « վերայ Հայոց բնակելոց ի Մօլդաւիայ և ի Վալաքիայ և յայն կողմանս՝ « կարգեցաք առաջնորդ և վերատեսուչ զփոխանորդն մեր գերապատիւ « Նիքիեմ սրբազան արքեպիսկոպոսն և ամենախոնարհաբար խնդրեմք յաստուած բարերար սուրբ կայսերութենէ ձեր, զի ամենաբարձր կայսերական հրովարտակաւ հրամայեսցիք ամենայն կառավարչաց և վերապատիւ կողմանցն այնոցիկ ձեռնառու լինել գերապատիւ փոխանորդին « մերոյ յամենայն հարկաւոր պատանձուսն հողերական կառավարութեանց: ... Դանիէլ կաթողիկոս: 1808. օգոստոս: Եջմիածին: »

Դ.

ԷԶՄԻԱՇՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԻԱՅԻ ՀԵՏ

Դանիէլի վերադառնալը Եջմիածին Ռուսաստանի համար մի բարոյական յաղթութիւն էր: Աղէքսանդր Ա. կայսրը շտապեց շնորհել զառամեալ ծերունուն Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանը իւր աստղով, որ Դանիէլը մեծ ջերմեռանդութիւնով ընդունեց: Սակայն վախենալով վերադարձի պարսից տէրութիւնը, կաթողիկոսը իւր մտաւոր բարեկամների (որոնց մէջ առաջին դէր խաղացող էր Ներսէսը) խորհրդով Աբբաս Միրզայի բարեհաճութիւնը խնդրեց շքանշանը կրելու: Պարսից արքայաժառանգը այնքան քաղաքագէտ էր, որ թողտփութիւն չնորհեց: Այն ժամանակ Դանիէլը շտապեց շնորհակալութեան նամակներ գրելու Աղէքսանդր կայսր 10) և Վրաստան:

10) Առ կայսրն ամենայն Ռուսաց Աղէքսանդր Ա. Սովորական ձեռք ըրց յետոյ՝ « լիկ երկիր ամենայն փառօք մեծութեան տիեզերատարած գերազոր կայսերութեան ձերոյ, լցաք և մեք ի փառաց անտի զոր Աստուած ծագով մարդանիրութեամբ տարածեալ առ մեզ յամենողորմած աթոռոյ « մեծութեան ձերոյ ճոխացուցիք գնուասնութիւն մեր մեծագոյն փառօք « և սլատօք, զարդարեալ զմեզ պանծալի նշանաւ սրբոյ Աննայի առաջ « ներորդ աստիճանի և երկնափայլ ճաճանչագեղ աստեղք. ի 30րորդ ա « լուր ավրելի գրեցեալն և ի 12րորդ աւուրն յուլիսի յայսմ ներկայ ամի « հանդերձ ամենողորմած պարզեալով բարերար և սուրբ կայսերութեան « ձերոյ ստացաք ի ձեռն առաջին կառավարչին Վրաստանու կողմանց « բազում նշանաց կրօն եներալ Ֆէլտմարշալ գրաֆ Իւան Վասիլիչ Կու « տովիչի, ոչ յաղագս արժանաւոր ծառայութեանց մերոց, այլ մանաւանդ « յաղագս մեծ ողորմութեան և մարդասիրութեան օժելոյդ Աստուծոյ: Ե « ոչ այնչափ միայն, այլ և մեծագոյն ողորմութեան և մարդասիրութեան « ձեր յայտնեցիք զիս ժառանգաւոր արժանացուցանելով համանգամայն « մեծ ողորմութեան ձերում գերկոսեանն ի հաւատարմաց մերոց՝ զփոխա « նորդն իմ Նիքիեմ գերապատիւ արքեպիսկոպոսն Ռուսաստանու հայոց « և զհարազատն իմ Յովնանէս արքեպիսկոպոսն Վրաստանու հայոց՝ կա « պելով ի գլուխ նոցա զպսակ բրիւնիս պատուական խաչի: Այժմ ըստ « մարդարէին առաւելապէս բարձրացաւ զլուխ իմ հանդէպ հակառակոր « դաց իմոց (Սաղմ. իզ.) առ որ և գնորայն ձայն բարձրացուցեալ աղա « չեմ, ովք որպէս Աստուածաման սուրբ կայսրն իմ և տէրն իմ ի ծայրն « հիւսիսոյ բազմեալ և զչնորհս տեսանէ ի ծագս տիեզերաց և փառաւոր « առնէ յարեւելս և ի հիւսիս (Սաղմ. ճժբ.), ընդ նմին և զերգ սրբունի

տանի հրամանատար Գուգուլիչին: ¹¹⁾ Նոյն միջոցներին, երևի դարձեալ Ներսէսի դրոմամբ, Գանիէլի կողմից մի այլ նամակ գրուեցաւ ռուսաց Աղէքսանդր Ա. կայսեր Աղքերմանցի Գրիգոր կաթողիկոսի մասին, որի Սուչովայ քաղաքում գտնուելը այն տեղի

« Աստուածամօրն ի բերան առեալ ցնծութեամբ և զոհաբանութեամբ երբեմ « գեմ՝ «արար ինձ մեծամեծս հզօրն և սուրբ է անուն նորա և ողորմութիւն նորա յազգաց յազգս:» Եւ այսու ամենայնիւ հանդերձ ամենայն « միաբանութեմբ հոգևորականաց իմոց և բոլոր ազգաւ հայոց ճանաչելով « զմեզ պարտաւորս ամենամեծ ողորմութեան ձերոյ՝ միջնորդ առեալ « զմայրն ողորմութեան զամենասուրբ Աստուածին՝ աղաչեմք զԱստուած « որպէս զի նա ինքն յերկնից յաթոռոյ փառաց իւրոց առատաձեռնեացէ « ի ձեզ ևս քան զես առաւելագոյն փառս և ճոխութիւնս, ամենազօր բազ « կաւ իւրով եղիցի հովանի ի վերայ ամենողորմած աթոռոյ սուրբ կայսերութեան ձերոյ և պահպանեցէ զանդին կեանս ձեր հանդերձ բոլոր ժա « ռանգակցօք իւրապարզ և պալատան ձերոյ ընդ երկայն աւուրս հզօր և « բարձր թագաւորութեամբ. ամէն: Ողջ լեր և այլն. Գանիէլ կաթողիկոս: « 1808. օգոստոսի 11. յԵմիածին:»

¹¹⁾ Առ պայծառափայլ գրաֆ Իւան Ալասիլիչ Գուգուլիչն: Աղօթարար « ձեր և... Գանիէլ կաթողիկոս և այլն: Նշան առաջներորդ աստիճանի « սրբոյն Աննայի և ճածանչագեղ աստղ հանդերձ ամենողորմած պարգևա « գրով նորին կայսերական մեծութեան ի 30րորդ աւուր ամսեանն ապ « բեղի սոյնոյ ամի ընդ նամակաց արտաքին իրակութեանց նախարար « տեառն գրաֆ Բուսմեանցովի և ձերոյ պայծառափայլութեան ժամանեցին « առ մեզ ի 12րորդ աւուրն յուլիսի, որոց ընդ առաջ ելեալ եկեղեցա « կան հանդիսիւ բազմութեամբ հոգևորականաց և մարմնաւորականաց եր « զօք հոգևորօք և հնչեցուցմամբ զանգակաց մութաք ի Քրիստոսահիմն տաճար « Տեառն ի սուրբ Եմիածին և առաջի անդահրաչ բեմի Իման սուրբ « տեղոյն մատուցեալ զամենաշերմեռանդ երկրպագութիւնս թագաւորին « թագաւորաց Աստուծոյ երկնաւորի խնդրեցաք զերկարութիւն անդին կե « նաց նորին կայսերական մեծութեան և զհաստատութիւն ամենողորմած « աթոռոյ բարերար կայսերութեանն ամենայն ռուսաց և մեծաձայն ամե « նեքին անպատում զուձուրութեամբ և լիաբերան շնորհակալութեամբ օրհ « նելով զամենաբարերար կայսրն և զթագաւորն մեր և զբոլոր պալատն « հանդերձ զօրօք և զօրապետօք ընկալաք ի գլուխս մեր որպէս զպարգևս « երկնաւորս և կրեցաք ըստ օրինի զաւուրս երկուս: Յերրորդում աւուր « առաքեցաք զկալալերն և զաստղն առ բարեբարոյ իշխողն երկրիս Հիւսէյին « իսան սպարապետն զօրաց պարսից և նա խորհուրդ ևս մեզ ոչ կրել « զնոյնս մինչև յայտնեցէ մեծ իշխողին կողմանցս խոհական Աբրաս Միր « զայ Շահապային և նոյնպէս գրեաց ինքն և յայտնեաց և ընկալեալ

հայոց մէջ՝ խռովութիւններ էր ծագեցնում: Գրութեան ոճից երևում է այն ատելութեան, նախանձի և վրէժխնդրութեան ոգին, որ ունէր Ներսէսը այդ Գրիգորի դէմ, և որ առհասարակ Ներսէսի անձնական գրութիւններին յատուկ է ¹²⁾:

« զհաճութիւն նորա հանդերձ ուրախութեամբ առնոյն, ծանոյց մեզ և հրա « մայեաց կրել համարձակապէս ըստ որոյ և մեք կրեմք և կրեսցուք անուե « լի ձայնիւ սաղմոսելով միշտ առ Աստուած՝ Տեր կեցն՝ զբարերարն մեր « զամենողորմած կայսրն ամենայն Ռուսաց և լուր մեզ յաւուր յորում « կարդասցուք առ քեզ: Գիտեմք և հաւաստի եմք, զի միջնորդ սոյն մե « ծի ողորմութեան եղելոյ ի վերայ մեր՝ պայծառափայլութիւն ձեր էք, « վասնորոյ առաւելապէս շնորհակալութիւն հանդերձ լիաբերան օրհնու « թեամբ յատկապէս ձեզ մատուցանեմք: Շնորհակալեմք մեծապէս և յա « զագս մեծ մարդասիրութեան ձերոյ, որով առաւել ևս մեծ արարեալ « զբարեկամութիւն ձեր առ մեզ, պսակել ետուք նաև զգլուխս հարազա « տին մերոյ գերապատիւ Յօհաննէս արք եպիսկոպոսին հայոցն Ռուսաս « տանու բրիտանի յատուական խաչիւ: Ոչ մոռանամք զբարերարութիւն « ձերոյ պայծառափայլութեան և խնդրեմք, զի և դուք աննուազելի ունի « ցիք զնոյն մարդասիրութիւն: Ամենախոնարհաբար մատուցաք առ նորին « կայսերական մեծութիւն և առ նախարարն արտաքին իրակութեանց գրաֆ « Բուսմեանցովին զգրեանս յաղագս շնորհակալութեան և խնդրեմք զի « պայծառափայլութիւն ձեր ունիցիք մեզ մատուցանել ի դուռն ողորմու « թեան: Ողջ լեր և այլն. Գանիէլ կաթողիկոս: 1808. օգոստոս:»

¹²⁾ «Առ ինքնակալն ամենայն Ռուսաց Աղէքսանդր Պաւլովիչ: Յի « սուսի Քրիստոսի և այլն: Աստուածազուրկ ամենողորմած բարերար ակ « արկութեամբ ձեր՝ մեր և ամենայն հոգևորականաց մերոց ծանր տառա « պանքն և նեղութիւնքն փոխարկեալ եղեն ի բաւական ապահովութիւն. « վասն կատարելագոյն ապահովութեան մերոյ ևս՝ յոյս մեր առաւելապէս « հաստատուն է առ ամենաբաւական և անդառնալի մեծ ողորմութիւն « ձեր: Ասկայն վնասք սրբոյ աթոռոյս Աբարատեան և ազգի հայոց մի « առ մի անթուելի են և բաւարարութիւնն անկարելի և ի վերայ այ « նոցիկ վերստին հակառակորդք մեր և պատճառքն ամենայն վնասուց « առանց զղջանալոյ և անհանդիստ, զօրօրինակ աստ միշտ կաթողիկոս « անուանեալն Գաւիթ, որքան կարողանայ առանձին գրով և բանիւ զբր « զքէ զհեթանոսացն իշխանաւորս և հարազատն և խորհրդատուն նորա « Գրիգոր վարդապետ անուանեալն, որ բնակի ի Գրիգորուպոլիս՝ նոյնպէս « բանիւ և գրով խռովէ զժողովուրդն հայոց, որոյ անա ի մերձակայ ժա « մանակի ի կողմանս Մօլդավիոյ խռովութիւն սերմանելոյ գրուածոց օրի « նակն ստորագրութեամբ հայոց քահանայից և երեկելի ժողովրդոց տեղ « ւոյն առ մեզ են, ուր ի վերայ սմին քահանայ մի ազնուազգի կօստանդ-

Ե.

ԴԱՆԻԷԼԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Դանիէլի Եջմիածին հասնելու օրից ըստ երևոյթին խաղաղութիւն էր խոստանալու հայոց. Գաւիթը քաշուած էր իւր համար նշանակած առանձին սենեակները և կարծես թէ այլ ևս ոչինչ ձրգտուած չուներ դէպի կաթողիկոսութիւնը: Գանիէլն էլ իւր բարի

« դուպոյտեցի Մեսրոպ անուն յաւուրս լինելոյ մեր անդէն ի Կ. Պօլիս և անուանեալ պատրիարք՝ վասն արժանաւորութեան անձին և բաւակա- և նովեան գիտութեան արժան համարեցաք ձեռնադրելոյ զնա ի քահա- և նայ վասն քարուք կառավարութեան ժողովրդեան Սշովայու Գրիգոր և վարդապետ անուանեալն, այն որ յառաջին զքանի ամս դատապարտեալ և եկեղեցական դատաստանաւ ի ժողովոյ աւելի քան 100 արքեպիսկոպոսաց, և եպիսկոպոսաց և վարդապետաց արգելեալ կայ յամենայն հոգևորական պաշ- և տօնէ, զնացեալ ի Սշով, հրատարակեալ է զինքն եպիսկոպոս և զրով և բանիւ և զրպարտեալ է զքահանայն ի մէջ ժողովրդեան իւրոյ և առաջի կառավար- և չացն հպատակաց տէրութեան Գերմանացւոց, թէ տաճկացեալ է Մեսրոպ և քահանայն այն և յետոյ փախտաւորան եկեալ, առնէ քահանայութիւն անդէն, և առ որ այնքան է բարձրացեալ աղմուկն և խռովութիւնն ի մէջ ժողովր- և դեան հայոց և Գերմանացի կառավարչացն մինչև ծերունի մայր քահա- և նային ի սաստիկութենէ երկուղին մահացեալ է, զորմէ թէ կամեցիք լիա- և պէս կարող էք հասն լինիլ ի փոխանորդէն մերմէ Եփրեմ արքեպիսկոպո- և սէ և ի գործակատարէն սրբոյ աթոռոյս հաւատարիմ հպատակէ տէրու- և թեան ձերոյ Մինասայ Նղիպարեան: Վասնորոյ ամենախոնարհաբար և խնդրեմ ի տիեզերասաստ մեծութենէ ձերմէ բարձրահրաման հրովարտա- և կաւ հրամայել, զի զԳրիգոր վարդապետն այն առաքեսցեն ի սահմանս և թիֆլիսու ի հռչակաւոր հայոց վանքն Հաղբատու, մնալ անդէն ի ներ- և քոյ վերատեսչութեան պատուելի առաջնորդի յիշեալ վանիցն և հայոց և Վրացոսանո. սահմանաց Յովհաննէս արքեպիսկոպոսի արժանաւոր եղելոյ և ձերումը կայսերական մեծ ողորմութեան և կրկին պարգևաց պանակի և և բրկանտի խաչի: Եւ յորժամ նա եկեսցէ անդ և Տէր մի արասցէ յամես- և ցի փրկութիւն և ազատութիւն աթոռոյ և հայրենեաց հայոց, մեք ևս և զԳաւիթն առաքեմք անդ ի յիշեալ վասն զի դաղարեացին վնասք եր- և կուց խռովարար և անհանգիստ հոգևորականացն, և լինիցի անդէն քըն- և նովիւն դոնէ միայն վասն զանձուց սրբոյ աթոռոյն սսկւոյ և արծաթոյ և և ականց պատուականաց, զորս կորուսեալ են մեծ գումար և աստ ի և ներքոյ բարբարոսական իշխանութեան որոնելն զնոցանէ կարէ լինել և առիթ չարաչար աւերութեան աթոռոյն և ազգի հայոց:... Գանիէլ կա- և թողիկոս: Օգոստոս. 1808. Եջմիածին:»

բնութեամբ և քաղցր վարքով պատրաստ էր սէր և բարեկամու- թիւն վերահաստատել իւր և Գաւթի մէջ, բայց կաթողիկոսը իւր նպատակին չըհասաւ: Գանիէլն փառաւոր վերադարձը միանգամայն անպատեղ էր Գաւթի մեջ համար և սրանց վերին աստիճանի զայ- րոյթ պատճառեց ու նախանձը զրգուեց: Եթէ հիմայ Գաւթը ստի- պուած էր Եջմիածնի սենեակներում առանձնական կեանք վարելու, այդ դեռ չէր նշանակիլ, որ նա հաշտուած է: Որքան երևում է մեր ձեռքը եղած գրութիւններից, այդ միջոցներում (այն է 1807 և 1808 թուականներին) Գաւթը և Գաւթեանք չեն դադարում մի անգամ ևս փորձելու իւրեանց բաղբը. նոցա գաղտնի գրու- թիւնները տեղում են ամէն կողմ և գուցէ մի օր յաջողութիւն ստանան: Գանիէլն կուսակիցք, որոնց մէջ զլիսաւոր դեր խաղացող- ներից մէկը Ներսէսն էր, ծանօթ էին Գաւթեանց ձգտումների հետ և միջոց էին պտուում նոցա առաջն առնելու:

Պէտք է զիտենալ որ մօտ վեց, եօթը տարի անթիւ նեղու- թիւններ կրելով և քանի մի անգամ բանտարկութեան մէջ լինե- լով, ծերունի Գանիէլն առողջութիւնը վերին աստիճանի խանգա- րուած էր, երբ որ նա փառքով Եջմիածին մտաւ: Կաթողիկոսը կա- րող էր վաղը միւս օրը վախճանիլ, և Վթուր թափուր մնալով, նորից գուցէ Գաւթի ձեռքը ընկնէր: Պարզ էր որ Գաւթը, իբրև առողջ մարդ, աւելի յոյս ուներ սպրեւու քան տկար Գանիէլը և որ զլիսաւորն է, Գաւթը հաւատացած էր որ Գանիէլն մահից յե- տոյ ինքը պիտի հաստատուի կաթողիկոսական գահի վրայ և իւր անդեալին վրէժխնդիր լինի: Գանիէլեանք այս բանի առաջը պիտի առնէին, ապա թէ ոչ իրանց մեծ վտանգ էր սպառնում: Արդէն հայոց անիշխանութեան վերջը դարերում, երբ Եջմիածինը հաղի- հազ կարողանում էր պահպանել իւր գոյութիւնը, մեր կաթո- ղիկոսների մէջ սովորութիւն էր դարձել դեռ կենդանութեան ժա- մանակ իւր համար փոխանորդ ընտրել և հայրապետական գահը իբրև իւր անձնական սեփականութիւն նորան թողնել ժառան- գութիւն: Այդպէս օրինակի համար՝ Գրիգոր Թ. կաթողիկոսը ընտ- արեց (1454 թուին) իւրեան յաջորդ Արիստակէս վարդապետին և այս բանը շատ շիտիներին պատճառ դառաւ. երբ Գրիգորից յետոյ Արիստակէսը կաթողիկոսացաւ, սա իսկոյն ընտրեց իրան յաջորդ Սարգիս վարդապետին, Սարգիսը — Յովհաննէսին և այլն: Այնու- հետև Ստեփան կաթողիկոսը ինքը ձեռնադրեց կաթողիկոսութեան

Միջայէլ Սերաստացւոյն, իբրև իրան օգնական և այսպէս յանկարծ վի և նոյն գահի վրայ եղան երկու կաթողիկոսներ: Այս օրինակին հետևելու լավ Քապէոս Բ կաթողիկոսը 1584 թուին իւր փոխանորդ Առաքելին ինքը բարձրացրեց կաթողիկոսական գահի վրայ. վերջինս իւր տեղը ձեռնադրեց Գաւթին, առ Մելիքիսէթին, ապա երկուսի կենդանութեամբ օժուեցաւ Եջմիածնի կաթողիկոս Սրապիոնը և այդպէս մի և նոյն գահի տէր երեքը եղան: Չենք ուզում մի առ մի թուել այդպիսի դէպքերը, որոնք տեղի ունեցան փասնևեօթներորդ և տասնևութերորդ դարերում. բաւական է ասել, որ հակառակ մեր եկեղեցական սահմանադրութեան, այդ բոլորը լինում էր առանց ժողովուրդի կամաց և մասնակցութեան և միանգամայն վնասը հասնում էր ազգին: Միմիայն քաղաքական գրութիւնը և ժամանակի դառնութիւնն էին արգելք, որ ժողովուրդը օր առաջ չըկարողացաւ զգուշացնել Եջմիածինը միմեանց ժառանգութիւն թողնող գահակալներին, թէ հայրապետական գահը ոչ դիւ ժառանգութիւն է բացի ընդհանուր հայ ազգի: Այսպէս թէ այնպէս՝ բայց Գանիէլեանք վճռեցին օգուտ քաղել վերջի ժամանակները սովորութիւն դարձած այս ապօրինի և ազգի իրաւունքները ոտնակոխ անող օրինակներից: Բարի բայց թոյլ Գանիէլը համոզուեցաւ որ Գաւթի չար դիտաւորութիւնների առաջն առնելու համար պէտք է իւր ձեռքով մի կաթողիկոսացու ընտրէ և գահը նորան ժառանգութիւն թողնէ: Բնականապէս ամէնից շատ իրաւունք ունէր այդ ժառանգութեան վերայ Ռուսաստանի առաջնորդ Եփրեմը, որ դեռ Գուկասի մահուանից յետոյ Գանիէլի հետ միասին կաթողիկոսական ընտրելի էր նշանակած. այնուհետև այս կօթը ութ տարում Եփրեմը շատ աշխատած էր յօգուտ Եջմիածնի և մանաւանդ Գանիէլի, լաւ անուն էր ստացած ռուսաց տէրութեան առաջ, բարեկամ էր Լազարեաններին, բայց որ զլնաւորն է՝ ոչ միայն բռնակալ չէր, այլ և բարի, ծեր և ոչ վառասէր: Եփրեմի ընտրութիւնից ոչ Եջմիածնի «գերագոյն» ժողովը, ոչ Ներսէսը ահ չունէին: Ահա Գեղարզակի ընտրութիւնը այս մասին շատ վտանգաւոր էր. վերջինս մի կտրիչ և յամառ բնութեան տէր մարդ էր: Աւանդութիւն կայ, որ իբր թէ Գանիէլը կամեցել է իւր յաջորդ Ներսէսին նշանակել, բայց թէ վերջինս ինքը հրաժարուել է: Թէ այս մասին և թէ Եջմիածնեցոյ միմեանց հետ ունեցած խորհրդների մասին ոչինչ գրաւոր

տեղեկութիւն չունինք և բերանացի աւանդութիւններին դժուար է մեծ հաւատ ընծայել:

Ինչպէս երևում է 1808 թուի ամառը Գանիէլը և Գանիէլեանք վճռեցին բերել տալ Եփրեմին Եջմիածին և յանձնել իրան կաթողիկոսական գահը: Հարկաւոր էր զառնայ ռուսաց կառավարութեան և խնդրել որ բարեհաճի այս ընտրութեանը և թոյլ տայ Եփրեմին գալ Եջմիածին: Այս մտքով Գանիէլի կողմից գրուեցաւ ռուսաց կայսեր ¹³⁾ և գրութիւնը ուղարկուեցաւ վրաստանի կառավարիչ գրաֆ Գուզովիչին որ տեղը հասցնէ ¹⁴⁾: Մի այլ գրու-

¹³⁾ Գանիէլի գրութիւնը առ կայսր Ռուսաց Աղէքսանդր Ա: (Սովորական տիտղոսներից յետոյ) «Մեծ են ողորմութիւնք ձերոյ կայսերական մեծութեան ի վերայ իմ և ի վրայ սրբոյ Աթոռոյն Արարատեան, և վասն որոյ քանզի օրըստօրէ ծանրանայ հիւանդութիւն լիվերայ իմ, ամենախոնարհաբար խնդրեմ ի սուրբ կայսերութենէ ձեր, զի որովհետև ժողովք հողևորականաց և մարմնաւորականաց սուրբ Եջմիածնի և Արարատեան գաւառին ընդիս և զգերապատիւ եղբայրն իմ Եփրեմ արքեպիսկոպոսն ընտրեալ էին արժանաւոր աթոռոյ կաթողիկոսութեան ամենայն հայոց յամի 1800, և ամենայն ազգս հայոց ստորագրեալ են զայս, որպէս յայտնի է տիեզերաքննին սուրբ կայսերութեան ձերոյ ի վաղուց, և ամենաողորմած մարդասիրութեամբ բարեհաճեսցիք առաքել զնա կանխաւ յաթոռն Արարատեան առ մեզ, և եթէ լինիցի զի արժանի եղէց և տեսանել զնա, բաղդաւոր համարիմ զիս նստեցուցանել զնա ի տեղի և իմ յաթոռ կաթողիկոսութեան սրբոյ Եջմիածնի մինչդեռ իցեմ կենդանի. և իսկ եթէ օրհաս մահու կանխաւ ժամանեցէ ի վերայ իմ՝ խնդիր իմէ և յամենողորմած սուրբ կայսերութենէ ձերոյ, արժանացուցանել զնա աթոռոյ կաթողիկոսութեան Արարատեան ի տեղի իմ: — Գանիէլ. օգոստոս և 1808. Եջմիածին:»

¹⁴⁾ Գանիէլի գրութիւնը վրաստանի կառավարիչ գրաֆ Իւան Վասիլի Գուզովիչին: «Պայծառափայլ գրաֆ Իւան Վասիլի, ողորմած տէր: և Գիտեմ զի շնորհ ունիք առաւելապէս ի վերայ իմ և ի վերայ գերապատիւ եղբոր իմոյ Եփրեմ արքեպիսկոպոսին Ռուսաստանո. հայոց, վասնորոյ խոնարհաբար յայտնեմ ձերոյ պայծառափայլութեան, զի որովհետև տն ժողով հողևորականաց և մարմնաւորականաց Արարատեան աթոռոյն և և գաւառին յամի 1800 ընդ մեզ և զԵփրեմ արքեպիսկոպոսն ընտրեալ էին արժանաւոր աթոռոյ կաթողիկոսութեան ամենայն հայոց, և ստորագրեալ էին զզք ընտրութեան այնոսիկ ամենայն հայոց, այժմ ըստ որում անանկու տկարութիւն ի վերայ իմ, ահա մի և նոյն օրինակաւ և առ նորին կայսերական մեծութիւն ամենախոնարհաբար գրեալ զինչդր

Թիւն ևս ուղարկուեցաւ Գուգովիչին ¹⁵⁾ Էջմիածնի եպիսկոպոսների կողմից, որոնց մէջ ամէնքի վերջը ստորագրել է Ներսէսը:

« երեք հաս, մինն յղեցի ի ձեռն սրբազան Նփրեմ արքեպիսկոպոսին եղ-
« բօրն իմոյ, միւսն առ հարազատ վեքիչն սրբոյ Աթոռոյն Մինաս Նղիա-
« զարեանն և զմինն ընդ այսմ մատուցանելով պայծառափայլութեան ձերոյ
« խնդրեմ զի յատուկ ողորմութեան հնոր ձեր տարածելով ի վերայ իմ և
« ի վերայ սրբոյ Աթոռոյն Արարատեան և ամենայն հոգևորականաց և
« մարմնաւորականաց հայոց, հաճեալիք մատուցանել զինդիր իմ առ նո-
« բին կայսերական մեծութիւն և միջնորդութիւն առնել զի վաղվազակի
« ճանապարհորդեսցէ առ սուրբ Աթոռն Արարատեան զցանկալի եղբայրն
« իմ զՆփրեմ արքեպիսկոպոսն արժանաւոր պատուով կաթողիկոսութեան
« ամենայն Հայոց: Եւ ես եթէ մեռանիցիմ և եթէ կենդանի լինիցիմ, զիմ
« ջերմեռանդութեամբ օրհնութիւն հանդերձ խնդրուածովք իմովք առ Աս-
« տուած Թողում վասն կենաց ձեր և որդւոց ձերոց և վասն տան հօր ձե-
« բոյ: ... Գանիէլ: Օգոստոս 1808. Եջմիածին: »

¹⁵⁾ Էջմիածնի եպիսկոպոսների նամակը գրաֆ Ի. Վ. Գուգովիչին:
« Ողորմած տէր: Խոնարհաբար յայտնեմք ձերում պայծառափայլութեան, զի
« յամի 1800, յետ առ Քրիստոս հանգստեան սրբազան կաթողիկոսին
« ամենայն հայոց տեառն Ղուկասու, ժողովս հոգևորականաց և մարմնա-
« ւորականաց Արարատեան Աթոռոյ և դաւառին ընտրեաց տանն կաթո-
« ղիկոսութեան ամենայն հայոց նախ՝ զգերապատիւ Գանիէլ կաթողիկոսն,
« ապա դառաջնորդն Ռուսաստանու հայոց սրբազան Նփրեմ արքեպիսկո-
« պոսն, բայց զի անձնասէր և փառամոլ անձինք ի մէջ մտին, յայտնի է
« ձերում պայծառափայլութեան զի սուրբ Աթոռն Էջմիածնի սաստկապէս
« աւերեցաւ, և բոլոր միաբանքն նորա ցիր և ցան եղեն և ամենայն ազգն
« կրեաց զմեծ նեղութիւն: Ենորհակալ եմք զմեծ ողորմութենէ նորին կայ-
« սերական մեծութեան, զի այս տարի մի աւելի՛ ազատեցաւ Գանիէլ սրբ-
« բազնակատար կաթողիկոսն և ժողովեցան բազմութիւնք ցրուելոց հոգե-
« բականաց և եղև սկիզբն կրկին շինութեան սրբոյ Աթոռոյ: Իսկ զի կեանք
« յիշեալ սրբազնակատարի պատրիարղին մերում մաշեցաւ ի մէջ բանտից
« և դանազան նեղութեանց, մինչև զայսօր ժամանակի ոչ գտանէ զկատա-
« բեալ առողջութիւն, մանաւանդ թէ օրքան զօր առաւելու տկարութիւնն:
« Վասնորոյ բարեհաճութեամբ նորին սրբազնակատար քահանայապետու-
« թեան սուրբ ժողովն Արարատեան հանդերձ բոլոր միաբանութեամբ
« արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և այլոց աստիճանա-
« Զորաց յայտնեաց բարեբարոյ Հուսէյն խան Սարգարին վասն յառաջա-
« դոյն ընտրեալ լինելոյ սրբազան Նփրեմ արքեպիսկոպոսին յազագս կա-
« թողիկոսութեան: Ուստի և նա ինքն՝ յիշեալ սաղարն երդմամբ զմիամը-
« տութիւն զրեաց առ Նփրեմ սրբազան արքեպիսկոպոսն զի եկեսցէ կան-

Գանիէլը արդէն յուլիս ամսից (1808 թուի) անկողնումն էր և օրէցօր տկարութիւնը սաստկանում էր: Գիտուն բժիշկ չըկար որ կա- րողանար օգնութիւն հասցնել իսկ կաթողիկոսի զրութիւնը այն աս- տիճան ծանրացաւ, որ իւր կուսակից եպիսկոպոսները շտապեցին վերոյբերեալ զրութեանց տակ Գանիէլին ստորագրել տալ և ուղղել ուր որ պէտք էր: Սակայն քանի որ ուսաց տէրութեան պատաս- խանը յայտնի չէր և Նփրեմն էլ շուտով չէր կարող հասնիլ, Գանիէլեանք պիտի աշխատէին իւրեանց կաթողիկոսի կեանքը եր- կարացնել առժամանակ, որպէս զի Գաւիթը չը տիրանայ Աթո- ուին: Այս պատճառով կաթողիկոսի համար մի լաւ գիտնական բժիշկ էր որոնվում: Սեպտեմբերի 5ին հրաւիրուեցաւ հիւանդին բժշկելու Նօրբեցի (որ Երեանի մի թաղն է) բժիշկ Թովալ (կաղ) Յօհանն ¹⁶⁾, որ իբր թէ իւր արհեստին տեղեակ էր: Բժիշկը հիւանդին գննե- լուց յետոյ դեղ շինելու համար Ամիրոէօվլէթի բժշկարանն է պա- պահանջում, որի օրինակը եղել էր Էջմիածնի զբաղարանում ու յետոյ անյայտացել էր: Բանից դուրս եկաւ, որ այդ բժշկարանի մի լաւ օրինակը գտնվում է Գաւթի մօտ, որ յայտնի էր ամէնքին

« խաւ: Մէք ևս այնպէս զրեցաք միաբանութեամբ առ ինքն Նփրեմ սրբա-
« զանն և առ ամենայն հոգևորականս և մարմնաւորականս հայոցն Ռու-
« սաստանու և Վրաստանու և առ վեհանձնեաց աղայ Մինասն Նղիազարեան
« վասն կանխաւ զալոյ Նփրեմ արքեպիսկոպոսին, քանզի յոյժ ցանկալ
« սրբազնակատար Գանիէլ կաթողիկոսն ի կենդանութեան իւրում նստե-
« ցուցանել զնա ի տեղի իւր: Խնդրեմք ի պայծառափայլութենէ ձերմէ,
« զի ուր հարկն իցէ յայտնեսցես զայս խնդիր մեր և ձեռնտու լիցիս, զի
« Նփրեմ արքեպիսկոպոսն եկեսցէ շուտով և օր յառաջ. վասն այսորիկ
« շնորհակալութիւն գրեսցես առ բարեբարոյ Հիւսէյն խան Սար-
« դարն և ծանուցանելով վասն յայտնելոյ նորին կայսերական մեծութեան
« զզիրն իւր, պատուիրեսցես աւելի ևս խնամ ունել և ապահովութեամբ
« պահպանել զսուրբ Աթոռն և զմիամտութիւն մինչ ցգալն նորոգ կաթո-
« ղիկոսացուին մերոյ: Քանզի գիտէք թէ միմիայն ի հովանաւորութեան
« նորին կայսերական մեծութեան կայ յուսացեալ Աթոռն Արարատեան և
« մէք ամենեքեանս: Մ նամք և այլն: ... Բարսեղ արքեպիսկոպոս, Յովակիմ
« արքեպ. Աստուածատուր արքեպ. Անդրէաս արքեպ. Ալէքսան արքեպ.
« Յովհաննէս արքեպ. Ներսէս արքեպիսկոպոս: »

¹⁶⁾ Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի 1763 - 1831: Մտերայ մա- գիստրօսի Մսերեանց (Մոսկվա 1876) գրքի մէջ յիշած բժշկի անունը Նահապետ է:

իրբև Էջմիածնի կողմապող և թալանող: Իսկոյն կարծուեցաւ, որ Ամիրտէօլլէթի բժշկարանն էլ Դաւիթը իրան սեփհականացրել է վանքի գրադարանից առնելով: Այսպէս թէ այնպէս բայց Դանիէլի կուսակիցները մարդ ուղարկեցին Դաւիթից բժշկարանը խնդրելու ուղարկածը, ինչպէս պատմում են, շատ կոպիտ և հրամայողական ձևով պահանջում է զիրքը Դաւիթից: Վերջինս, յանդուգն վարմունքից վշտացած, բաց է ասում և Դանիէլեանք շտապում են մեկնել այս իբրև թշնամութեան պտուղ: Դեսպանախօսութիւնը մի անգամ ևս կրկնվում է և Դաւիթը աւելի վշտացած վճռական կերպով բաց է ասում: Դանիէլեանք վերջովուած այդ վարմունքից ուզում են վրէժխնդիր լինելու: Ներսէսը, ինչպէս լրած ենք, զրգում է ամենքին Դաւիթի մօրուքը վեր առնել: Այս միտքը ընդունելով, վազում, գնում են, բռնում Դաւիթին և ծեծելով բերում Վեհաբանի այն սենեակը, որ կոչվում էր շքմեռային Թանափա: Այստեղ Դաւիթին գետին են դրում և ոմանց ասելով Ներսէսը ¹⁷⁾,

¹⁷⁾ Այս մասին Ներսէսը գրած ունի Գեղամեան Գարրիէլ և Յովհաննէս հարիւրապետներին հետեւեալ նամակը: «Գերազատիւ իշխանք հայոց « Գարրիէլ և Յովհաննէս հարիւրապետք, ողորմած տեսք մեր: Վարդան « հարազատն ձեր եկն և խնդրեաց ի մենջ յայտնել ձեզ վասն Սրբազան « Գանիէլ կաթողիկոսին: Սրբազանն ահա երկու ամիս ի տկարութեան « մէջ կայ և օրէ՛ցօր սաստկացաւ տկարութիւնն մինչև ցայսօր և Աստուած « գիտէ ողջանալն կամ չառողջանալն: Ի վերայ այսորիկ Դաւիթ հայրն « զականջսն տնկեաց և յամսոյս (տեպտ.) 5 եկն բժիշկ մի Թօփալ « Յօնան անուն Նօրքեցի և նստեալ առաջի սրբազանին խնդրեաց զբժշ- « կականն և խոստացաւ ցուցանել անդ զցաւն սրբազանին և զգեղննորա, « վասն այսորիկ զԳրիգոր վարդապետն յղեալ առ Դաւիթ հայրն խնդրեցաք « զբժշկարանն և ոչ ետ, դարձեալ առաքեցաք զԳրիգոր վէքիլ եպիսկոպոսն « և ոչ ետ. ապա սուրբ ժողովն իջմիասին եկեալ գրեաց առ Դաւիթ « հայրն և խնդրեաց զգիրքն, և նա անարգեաց զժողովս և դարձոյց զԳրի- « գոր եպիսկոպոսն դատարկ: Յայնժամ միաբանքն ևս ժողովեալ էին և « զիր արդայի (խնդրագիր) ունէին ի ձեռս իւրեանց վասն մատուցանելոյ « սրբազանութեան (Դանիէլին) թէ կամ մեզ ճանապարհ տուր, որ ուր կա- « բող լինիցիմք գնա՞ք և կամ թէ սարգարի և Շահգաւտայի թղթովն մեզ « միամտութիւն տուր, որ Դաւիթն չլինի ամենեկն կաթողիկոս, և Երբա- « ղան Նփրեմն լինի կաթողիկոս յետ ձեր, և մինչդեռ նոքա զայն խնդ- « րէին և խաբար լսեցին որ երեք անգամ մարդ գնաց և Դաւիթն բժշկա- « բանը չտուաւ, ամենեքեան միաբան զիմեալ ի վերայ Դաւիթն՝ վանականք

ոմանց ասելով Նօքեան վարդապետը, ոչխար խուզելու եղլիխա ա- նուանված մեծ մկրատով Դաւիթի փառաւոր և երկայն մօրուքը խուզում են և ստիրում, յետոյ սանում նորան բանտը ձգում, նախապէս սաստիկ ծեծելով: Այս չափազանց անկարգութեան լուրը լսելով, Հիւսէյն խան սարգարը շտապեց, հասաւ Էջմիածին և չարագործը՝ ով որ լինէր նա, սաստիկ պիտի պատժուէր, բայց բարի ու մերձ ի մահ հիւանդ Դանիէլը անցքի բոլոր մեղքը իւր վերայ է առնում և ներումն ստանում սարգարից ¹⁸⁾:

Այդ միջոցներում, երբ Էջմիածնի մէջ Դաւիթի մօրուքը գերծ- վում էր, ռուսաց բանակը Գուզովիչի հրամանատարութեամբ ան- ցել էր պարսից սահմանը և մօտնում էր Երևանին: Հիւսէյն սար- գարն աշխատելով Դանիէլին և Դաւիթին ռուսաց ձեռքը չըձգել, հրամայում է տանել Երևանի բերդը թէ մերձ ի մահ հիւանդ Դա- նիէլին և թէ բանտարկուած Դաւիթին: Հօկտեմբերի 9ին 1808 թուի Գանիէլ կաթողիկոսը վախճանում է Երևանի բերդի մէջ ¹⁹⁾ և նորա

« և աշխարհակամք ծեծելով և ջարդելով բերեալ ի ներան, խսկոյն արեղայք « թափեալ ի վերայ՝ դերձակի մկրատն խիտալ ի ձեռաց դերձակին կտրե- « ցին զմօրուքս ողորմելոյն և վերջապէս ևս բովանդակ ածելեալ մեծացու- « ցին զբանն. երկրորդ օրն եկն սարգարն ի վանքն ի տես սրբազանին և « առաքեաց զմարդ մի ի տես Դաւիթին և խնդրեաց թէ խոստացած փէշ- « քաշդ տուր, որ հանեմ զքեզ ի բանտէ և նա դարձեալ խոստացաւ, « վասնորոյ ահա միրզայ Թաղաճոսն մուհասիլ է ի վերայ նորա և Բաբաբէգն « ի վերայ ողորմելի Բարսղին (Դաւիթի եղբայրն), չարչարեն զնոսա և զրամ « խնդրեն և չգիտեմ թէ ուր իցէ եղբերոց: Բայց ի վերայ այսորիկ բարեբա- « րոյ սարգարն միամտութիւն տուաւ թէ զրկեցէք որ Նփրեմ հայր սրբա- « ղանն գայ և ինքն ևս երդմամբ միամտացուցանէ զնա զի գայցէ և այժմ « պատրաստ է մահնէն և խնդիրք վասն Նփրեմ հայր սրբազանին. ներկա- « յիս որպիսութիւնն այս է, և վերջինն Աստուած հոգացցէ զբարին. ողջ « լերուք և Տեր ողորմեսցի մեզ և ձեզ ամէն: Նուաստ եպիսկոպոս « Ներսէս: Սեպտ. 12. 1808. ի սուրբ Էջմիածին:»

¹⁸⁾ Այս անցքին վերաբերեալ քանի մի գրութիւններ կան մեր մօտ, բայց որովհետև ուղղակի Ներսէսին չեն վերաբերիլ, մենք զանց առինք առ այժմ տպելուց: Քանի մի մանրամասնութիւն (թէ և փոքր ինչ սխալ) գտնվում են հանգուցեալ Մսերեանի «պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի» գրքում, ուր որ կարող են զիմել ցանկացողները:

¹⁹⁾ Նամակ Թիֆլիսից Փիթոյնց Աղայի Նփրեմ արքեպիսկոպոսին « ...խոնարհութեամբ... զհամբոյ իմ վերամատուցանեմ... եթէ զհամ- « բաւ Երևանայ կամիս գիտել զայս յայտ առնեմ... զօրք... կայսեր չը-

մարմինը մնում է անթաղ մինչև ուռնների լջմիածնի մտերից յետ քաշուկը, ապա ուրեմն տանում են լջմիածին և թաղում:

Ներկայ պատերազմում ուռնները դարձեալ մտնում են էջմիածին և միաբանութիւնը խաչ ու խաչվառով դիմաւորում է գրաֆ Գուդովիչին: Ներսէսը գլխաւոր դերն է խաղում այդ ընդունելութեան մէջ և այդ է պատճառը որ նորա ծառայական ցուցակի մէջ ասած է՝ «ի գալ Կուդովիչին փառաւորագոյն զօրօք Ռուսաց և յերևան Ներսէս գոլով առաջին ի կառավարութեան Աթոռոյ

« ջապատեալ են շուրջ Նրեանաւ և ամրոցաւ ևս և հատեալ են զՉուր ամ-
« րոցին և զօրքն կան իջևանեալ յերեան քաղաքին և յուսամ, զկնի քա-
« նի աւուրց լիցեցեք զառմանէ ամրոցին: Այդ զորպիսութիւն պայծա-
« ռափայլ գրաֆին անցեալ փօստիւն ևմ մատուցեալ, թէ որպէս մտեալ
« էր ի սուրբ էջմիածին և կամ որպէս յառաջ ընթացեալ էին միաբանքն
« իջման տեղոյն յարգելով զնա և օրհնելով զանուն... կայսեր, ընդ
« թղթով Ներսէս սրբազանին և յուսամ զայն վաղուրեմն ստա-
« ցեալ իցէ բարձր սրբազնութիւն ձեր: Թէպէտ տասն և կամ քսան օր
« վաղ տարածեցին զհամբաւ մահուան սրբազան կաթողիկոսին այլ յերկ-
« մտութեան էաք. արդ ի բանակէ անտի Մելիքի որդի Ալբանիցն (Բէհրու-
« դեանց) թուղթ եկն յանցեալ հոկտեմբերի 29էն գրեալ, որ նովաւ ճամբատեցաւ
« մահ սրբազան կաթողիկոսին (ի գրութենէ Սինդակահանաց), առ այս
« բարեսիրտ սրբազնութիւն ձեր, ևս վկայէ որ ոչ սակաւ ցաւեալ տրա-
« մաք և... զայս ևս գրեն թէ երբ լուաւ զայս համբաւ գրաֆն իսկոյն
« զմարդ առաքէ ի սուրբ Աթոռն թէ մինչ զայս համբաւն յայտնցի ա-
« ռաջի կայսերն և հրամանաւ նորին վիճակեսցի առ ոմն զհայրապետու-
« թիւն, սրբազան Յօհաննէս արքեպիսկոպոսն եղիցի վերակացու և կա-
« ռավարիչ տանն այնմիկ և համայն միաբանքն մեծք և փոքունք զնան
« առ սպաս գրաֆին և անհաճին խորհրդոյ նորին. և զայս յայտնեն ա-
« ռաջի նորա թէ կտակ սրբազանին մեր այն է, ևս և համայն հասա-
« բակութեան կամք, զի Նփրեմ սրբազան եղիցի մեզ տէր և զուլս. Ներ-
« սէս սրբազանն ի բանակին է անդ և միւս միաբանքն ի սուրբ Աթոռն,
« զայլ մի համբաւ տակաւին ոչ գիտեմք...: Չայս ևս յայտ առնեմ բարձր
« սրբազնութեան ձերում, ի բազմաց զօրաց ուռնաց մասն ինչ զօրք թէ
« ուսւք և կամ թէ մեր երկրացիք բանակեալ գոլով ի Գառնաչայիր,
« յերևան նստեալ սարգարն չորս կամ հինգ հազար զօրօք անցանի յԱ-
« բաղն դէպ այսր. իսկ Գառնայ բնակիչքն իմանալով արձակեալ ասպա-
« տակեն զնոսա և բոլոր բանակն մնայ սոցա և բազում զօրք նոցա ևս
« սրահարեն, և մնացեալքն փախստական լինելով վերստին անցանեն ան-
« տի, և բաց յամրոցէն՝ յերևանայ հողումն զօրք նոցա ոչ գոյ և ոչ գտանի...
« մնամ... ծառայ Աղա Փիթոյով ի նոյեմբերի 7 1808 ի թիֆլիս»

« Արարատեան յամենայն ինքնեան առաջարկեալ իրողութիւնս ի
« գրաֆ Կուդովիչէն ծառայեալ էր արժանաւոր հաւատարմութեամբ,
« ոյր վասն և գրաֆն արարեալ է սմա զխոստումն վասն պանակէի: Ափսոս որ այս ծառայութեանց մասին ոչինչ աւելի տեղեկութիւն չուրինք:

Փիթոյինց Աղայի գրութեանը նայելով ուռնաց զօրքի վերադառնալուց յետոյ Ներսէսը գնում է պարսից բանակը և խնդրում Աբբաս Միրզայից նախ՝ հրովարտակ զրել Նփրեմին գալ օծուիլ կաթողիկոս, երկրորդ՝ նկարագրելով Աթոռի կրած վնասը անակընկալ պատերազմներից և ուռնաց յարձակմունքից—վանքի կալուածների հարկերը պակասցնել: Շահզադայն ընդունում է նորա երկու առաջարկութիւնները և հրամայում որ եպիսկոպոսներից մինը գնայ Թավրէզ և այնտեղ ստանայ հրովարտակը: Բարձրագոյն խորհրդանք ուղարկում է Թավրէզ Գրիգոր եպիսկոպոսին: Նփրեմին Ռուսաստանից բերելու խնդրի մասին Աբբաս Միրզան տատանմանց մէջ էր. գուցէ այս է պատճառը որ շահզադայի հրամանով Արաագի սուրբ Թադէոսի վանքում նստող Ասրպատականի առաջնորդ և նախկին աթոռակալ Միմէօն եպիսկոպոսը այդ միջոցում զայիս է Թավրէզ: Շահզադայն նախ սրան է առաջարկում կաթողիկոսութիւն, բայց սա հրաժարվում է ընդունելուց. այնուհետև Աբբաս Միրզան շորհում է հրովարտակ Նփրեմի անուամբ:

Ինչպէս արդէն ասացինք՝ Գանիէլ կաթողիկոսը դեռ ևս օգոստոս ամսին դարձաւ ուռնաց կայսեր խնդրելով Նփրեմի կաթողիկոսացնելու մասին: Կաթողիկոսի նամակը կայսերական դռանը հասցնող եղաւ աղայ Մինաս Լազարեանը. վերջինս իւր կողմից ևս մի և նոյն մտքի մի խնդրագիր ներկայացրեց արքային ²⁰): Գրաֆ Սալտիկովը, որ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարի պաշտօն էր կատարում, յիշեալ խնդրագրների պատճենները ուղարկելով Վրաստանի գլխաւոր հրամանատար գրաֆ Գուդովիչին, 1809 թուի յունվարի 29ից գրում է ²¹) «Թագաւոր կայսրը հայոց պատրիարքների (կաթողիկոսների) գործում իրան համար կանոն դրած է ոչ միայն « դէմ չըկենալ հայոց ազգի ընդհանուր ցանկութեանը, այլ աւելի « ևս ուշք դարձնել զորա վրայ և հեռացնելով այն բոլոր հան- « զամանքները, որոնք ցայսօր տեղիք եղան բաժանմանց, ու միմիայն

²⁰) Տես АКТЫ Кавк. Археограф. ком. т 3-й стр. 82.

²¹) Նոյն տեղ. երես 81.

« ցանկալով որ կաթողիկոսի ընտրութեան մասին հայոց միաբա-
 « նութիւնը վերականգնացնէր նոցա մէջ խաղաղութիւն և բարե-
 « կարգութիւն, բարձրագոյն հրամայեց ինձ, ուղարկել ձեզ Դա-
 « նիէլ կաթողիկոսի նամակն.....»

« Չերդ պայծառափայլութեան աւելի լաւ են յայտնի այդ երկրի
 « բոլոր հանգամանքները և աւելորդ է երկարաբանիլ այն մասին,
 « թէ մեր դործերի կապը պարտաւորում է մեզ ուշադրութիւն
 « դարձնել այն անձի ընտրութեան վրայ, որ այդպիսի մի նշանաւոր
 « պաշտօն կրելու է նշանակվում: Խօսք չկայ, որ ուսուց տէրու-
 « թիւնը պէտք է որ նախագաս համարէ կաթողիկոսացու անձերից
 « աւելի նորան, որին կը հրաւիրէ ազգի ձայնը, որ աւելի յայտնի
 « կլինի իւր հաւատարմութեամբ դէպի ուսուց կայսերութեան գա-
 « հը: Այս հիման վրայ թագաւոր կայսրը մեծ հաւատ ընծայե-
 « լով ձեզ, այս գործը ձեր քննութեան յանձնած է և սպասում է
 « ձեր կարծիքին: Բայց եթէ Դանիէլ պատրիարքը արդէն վախճա-
 « նել է, հարկաւոր կըլինի այն ժամանակ անմիջապէս նորա տեղը
 « բարձրացնել մէկին, որ ուսուց նուիրուած լինի, որպէս զի պար-
 « սիկները օգուտ չքաղեն այդ հանգամանքից և չը նշանակեն իրանց
 « կողմնակից մէկին, վասն զի յետոյ դարձեալ պիտի ծագին կու-
 « սակցութիւններ և խռովութիւններ: Մի այդպիսի մեզ համար
 « փնասակար յետևանքի առաջն առնելու համար՝ Նորին Բարձրու-
 « թիւնը վատահանում է ձեր ընտրութեան վրայ, գիտենալով որ
 « այդ պիտի լինի արգասիք ձեր հայրենասիրութեան և իրաւունք է
 « տալիս ձեզ, որ եթէ Դանիէլ պատրիարքը վախճանի, էլ այս-
 « տեղից բարձրագոյն հրամանի չսպասելով, նշանակել և առաջուց
 « յանուն նորին կայսերական մեծութեան հաստատել իբրև կա-
 « թողիկոսական յաջորդ այն եպիսկոպոսին, որին որ ձեր ընտրու-
 « թեամբ այդ աստիճանին աւելի արժանի կը համարէք, մի և նոյն
 « ժամանակը ի նկատի ունենալով, որ այդ անձը Ռուսաս-
 « տանին անձնատուր մի մարդ լինի և Հայոցոց ազ-
 « գիւն էլ հաճելի:»

« Այս բոլոր նախագիծը թագաւոր կայսրը կամեցաւ ձեզ
 « նկատել տալ միայն այն պատճառով, որպէս զի դուք բոլորովին
 « ազատ լինիք այս մասին պատահելիք դէպքերում: Թագաւոր
 « կայսրը մինչև անգամ հեռի չէ այն մտքից որ Դանիէլի մահուա-
 « նից յետոյ պատրիարքական աստիճանի մէջ հաստատուի Դա-

« ւիթը, եթէ միայն այս զիջմամբ դուք կարող էք յուսալ նորան
 « մեր կողմը ձգել և նորան ներգործել տալ յօգուտ մեր թէ
 « Պարսկաստանի հետ խաղաղութեան դաշինքը կապելու ժամանակ
 « և թէ ներկայ պատերազմական գործողութեանց միջոցին: Թագա-
 « ւոր կայսեր այս մտքերից դուք կիմանաք, որ Նորին կայսերական
 « մեծութեան գլխաւոր ցանկութիւնն է, որ կաթողիկոսի ընտրու-
 « թեան մէջ ուսուց տէրութեան օգուտը համաձայնացնուէր հայոց
 « ազգի ցանկութեան հետ. մնացած բոլորը թողնում է ձեր կամքին:»

Այս գրութեանը գրաջ Գուղովիչը պատասխանեց 1809 թուի
 « փետրուարի 18ին հետևեալը ²²⁾: «Չեր յարգելի գրութիւնից, որ էր
 « յունվարի 29ից, նկատելով Նորին կայսերական մեծութեան բարձ-
 « րագոյն կամքը, որով թոյլ է տալիս իմ կարծեաց ընտրել հայոց
 « Դանիէլ պատրիարքին մի յաջորդ, որ նորա մահուանից յե-
 « տոյ կարողանար ստանալ պատրիարքական աստիճանը — ես շտա-
 « պում եմ պատասխանելու ձեզ այս մասին, որ հայոց պատրի-
 « արք Դանիէլը, չնայելով իւր վերին աստիճանի թոյլ առողջու-
 « թեանը, Եջմիածնի վանքից պարսից ձեռքով տարուեցաւ Երևան
 « և այնտեղ բերդի պաշարման ժամանակ հիւանդութեան սաստիկա-
 « նալուց վախճանեցաւ ու այս մասին ես յետոյ իմացայ: Նորա
 « կտակով, որ թողած ունի Եջմիածնի վանքում, ընտրած է թէ
 « նորա ձեռքով և բոլոր հոգևորականութեան համաձայնութեամբ
 « նորան յաջորդ Եփրեմը, որ Ռուսաստանում բնակող բոլոր հայոց
 « առաջնորդն է: Այս ընտրութիւնը, որքան ես կարողացայ նկատել,
 « համաձայն է նմանապէս այստեղի բոլոր հայ ազգի ցանկութեան
 « որոնք մի առանձին յարգանք ու հաւատարմութիւն ունին դէպի
 « այս հովուապետը: Եջմիածնի բոլոր հոգևորականաց ժողովը, երբ
 « ես զօրքերի հետ միասին Վրաստան վերադառնալիս այդ վան-
 « քումն էի, նմանապէս յայտնեց իւր ցանկութիւնը Եփրեմի կա-
 « թողիկոսութեան մասին և խնդրեց ինձ միջնորդել ամենաողորմած
 « թագաւոր կայսեր առաջ նորան այս աստիճանին հասցնելու և
 « իւր պաշտօնի մէջ Բարձրագոյն հաստատելու մասին: Այս պատ-
 « ճառով՝ ի նկատի ունենալով որ (Եփրեմի) երկարամեայ Ռուսաս-
 « տանի մէջ գտնուիլը և նորին կայսերական մեծութեան կողմից
 « նորա վրայ թափած այն առատ ողորմութիւնները, որոնցով նա

22) АБТМ К. А. К. Т. 3-й стр. 83.

ա բաղդաւորացրած է, — պիտի հաստատապէս երաշխաւորեն, որ նա
« (Յփրեմ) ի հարկէ կրմնայ Ռուսաստանին միշտ հաւատարիմ և
« ջերմեռանդ — ես այնպէս եմ համարում, որ բարձրագոյն հաստա-
« տութիւնը սորա հայոց պատրիարքի կոչման մէջ որքան որ հա-
« մաձայն կարող է լինել Ռուսաստանի շահերի հետ, այնքան էլ
« հաճելի պիտի լինի այստեղի հայ ժողովուրդին և հոգևորակա-
« նութեանը: Իսկ պատրիարքական գահը խնդրող Գաւթին, ինչ-
« պէս յայտնի է, հայոց ազգի մեծամասնութիւնը քիչ է յարգում
« և չէ սիրում նորա բռնութիւնները և Եջմիածնի վանքի կողոպտե-
« լու համար. և որովհետև բոլոր ժամանակը նա պարսից ցոյց է
« տուած անկեղծ հաւատարմութիւն, այդ պատճառով տեղիք ու-
« նինք կասկածելու որ հազիւ թէ նա լինի յուսադրելի և կար-
« ծում եմ, որ նա երբ մինչև անգամ բարձրագոյն հրամանաւ հաս-
« տատուի հայոց պատրիարքի աստիճանի մէջ, հազիւ թէ ձեռք
« վեր առնէ իր նախընթաց սերտ յարաբերութիւններից պարսից հետ:
« Ուրեմն նորա ընտրութիւնը պէտք է քիչ համապատասխանէր
« թէ Ռուսաստանի շահերին և թէ հայոց ազգի ցանկութեանը:

Այդպէս ահա խնդրելով ձեզ որ այս իմ կարծիքը ամե-
« նահպատակաբար հաղորդուի Նորին Կ. Մեծութեան, այս
« հանգամանքը բարձրագոյն բարեհաճութեան թողնելով, մի և
« նոյն ժամանակը պարտք եմ համարում աւելացնել որ մեր
« պարսից հետ ունեցած յարաբերութեանց պատճառով, պէտք է
« կարծել որ հազիւ թէ Պարսից տէրութիւնը հաճաձայնի յօժա-
« րութեամբ իւր կողմից հաստատելու (Յփրեմին) ընդհանուր հայոց
« պատրիարք: Մինչև որ չը վերանորոգուին Պարսկաստանի հետ խա-
« ղաղ յարաբերութիւնները, վասնզայն է նոյն իսկ սրբազան Յփ-
« րեմի համար Եջմիածին գնալը, քանի որ սա պարսից ձեռքին է:
« Ընդհակառակը ես կարծում եմ որ մեր գործերի յաջողութեան
« համար աւելի օգտաւէտ է նորա (Յփրեմի) առժամանակ Թիֆլի-
« սում մնալը, որտեղից նա կարող է մեծ ներգործութիւն ունե-
« նալ Պարսկաստանի մէջ գտնուող ժողովուրդի հոգևորականու-
« թեան վրայ, իսկ այս հարկաւոր է մինչև որ մեր գործերը Պարս-
« կաստանի հետ աւելի լաւ ընթացք ստանան:»

Այս գրութիւնը պատճառ եղաւ Յփրեմի հայոց կաթողիկոս-
« սութեան գահի վրայ հաստատուելուն:

Նկր.3

« Ազգային գրադարան



NL0127097

Նկր. 2

« Ազգային գրադարան



NL0127098

Նկր. 1

« Ազգային գրադարան



NL0123827

